

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لویس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446



228, Հոկտեմբեր 2017թ. No 228, October 2017 شماره ۲۲۸ آبان ماه ۱۳۹۶

Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Խմբագրական.....0
- 2- Հայաստանի Հանրապետություն.....1
- 3- Արևմտյան Հայաստան.....9
- 4- Սփյուռք.....12
- 5- Միջազգային.....15
- 6- Հասարակական.....17
- 7- Մշակույթ.....19

Պարսկերեն բաժին

- Արցախի պատմություն.....0-2
Աղվանք, Աղբրեջա.....2-4

Շապիկի առաջին էջում՝ Սասունցի դավիթ

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 228, Հոկտեմբեր 2017 No. 228, October 2017

ماهنامه لویس - شماره ۲۲۸ آبان ماه ۱۳۹۶

Մշակութային և Հասարակական Ամսագիր

ԼՈՒՅՍ

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան

Թամ Ղարախանյան, Վահիկ Վարդանյան

Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչումյան

Փոստարկ 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۹۴۸۸-۱۵۸۷۵

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com

نشانی اینترنت: www.louysonline.com

Հայաստանի խորհրդարանում տեղի ունեցած ահաբեկչությունից անցել է 18 տարի



18 տարի առաջ՝ հոկտեմբերի 27-ին, ռճրագործների խումբը՝ Նաիրի Հունանյանի գլխավորությամբ, ներխուժեցին Հայաստանի Ազգային ժողովի նիստերի դահլիճ եւ դիմահար կրակոցներով սպանեցին կառավարության եւ խորհրդարանի անդամներին:

Ահաբեկչության զոհ դարձան երկրի վարչապետ, Սպարապետ Վազգեն Սարգսյանը, խորհրդարանի նախագահ Կարեն Դեմիրճյանը, ԱԺ փոխնախագահներ Յուրի Բախշյանն ու Ռուբեն Միրոյանը, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանը, խորհրդարանի պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը եւ Միքայել Քոթանյանը:

Ահաբեկիչների նկատմամբ դատավարությունը տեւեց 2001-2003 թվականները: 6 ահաբեկիչները, այդ թվում՝ նրանց ղեկավար Նաիրի Հունանյանը, նրա եղբայր Կարեն Հունանյանը, նրա քեռին՝ Վոան Գալստյանը, Դերենիկ Բեջանյանը, Էդիկ Գրիգորյանը եւ Աշոտ Կնյազյանը դատապարտվեցին ցմահ ազատազրկման: Համլետ Ստեփանյանը դատապարտվեց 14 տարվա ազատազրկման:

3 տարի տեւած դատավարությունն այդպես էլ չկարողացավ կամ չջանկացավ վեր հանել ահաբեկչության կազմակերպիչներին եւ մինչ օրս էլ հասարակությունը լուրջ կասկածներ ունի կազմակերպիչների մասով:

Հայաստանի Հանրապետություն

Խորհրդարանում հարգեցին «Հոկտեմբերի 27-ի» զոհերի հիշատակը

Ազգային Ժողովում այսօր՝ հոկտեմբերի 27-ին, նիստը սկսվեց 1 ռուպե լուծարմամբ: Պատգամավորները մեկ ռուպե լուծարմամբ հարգեցին «Հոկտեմբերի 27-ի» զոհերի հիշատակը:

Հիշեցնենք, որ 18 տարի առաջ՝ հոկտեմբերի 27-ին, ոճրագործների խումբը՝ Նաիրի Հունանյանի գլխավորությամբ, ներխուժեցին Հայաստանի Ազգային Ժողովի նիստերի դահլիճ եւ դիմահար կրակոցներով սպանեցին կառավարության եւ խորհրդարանի անդամներին:

Ահաբեկչության զոհ դարձան երկրի վարչապետ, Սպարապետ Վազգեն Սարգսյանը, խորհրդարանի նախագահ Կարեն Դեմիրճյանը, ԱԺ փոխնախագահներ Յուրի Բախշյանն ու Ռուբեն Միրոյանը, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանը, խորհրդարանի պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը եւ Միքայել Քոթանյանը:

Ահաբեկիչների նկատմամբ դատավարությունը տեւեց 2001-2003 թվականները: 6 ահաբեկիչները, այդ թվում՝ նրանց ղեկավար Նաիրի Հունանյանը, նրա եղբայր Կարեն Հունանյանը, նրա քեռին՝ Վռամ Գալստյանը, Դերենիկ Բեջանյանը, Էդիկ Գրիգորյանը եւ Աշոտ Կնյազյանը դատապարտվեցին ցմահ ազատազրկման: Համլետ Ստեփանյանը դատապարտվեց 14 տարվա ազատազրկման:

3 տարի տեւած դատավարությունն այդպես էլ չկարողացավ կամ չցանկացավ վեր հանել ահաբեկչության կազմակերպիչներին եւ մինչ օրս էլ հասարակությունը լուրջ կասկածներ ունի կազմակերպիչների մասով:

Նոր հրթիռային կայաններն արդեն Հայաստանում են եւ շուտով կսկսեն գործել



Հոկտեմբերի 31-ին ՀՀ ԱԻ նախարար Դ. Տոնոյանն աշխատանքային այցով եղել է ՀՀ Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքում գտնվող ռադիոլոկացիոն կայանում՝ ծանոթանալու պիլոտային ծրագրով նոր հրթիռային կայանների տեղադրման աշխատանքներին:

ԱԻ-ից հայտնում են, որ բանակցությունների արդյունքում՝ ռուսական ընկերությունը նախատեսված 2 հակա-կարկտային հրթիռային կայանի հետ միասին, որպես նվիրատվություն, տրամադրել է եւս մեկ կայան,

արդյունքում՝ երկու «Экзот-3» կայան տեղադրվել է Արագածոտնի, մեկը՝ Արմավիրի մարզում, ինչի շնորհիվ ստեղծվել է շրջայական պաշտպանության գոտի:

Առաջիկա օրերին կայանները պատրաստ կլինեն գործարկման: Սա հնարավորություն կտա կարկտահարությունից հուսալի պաշտպանության տակ առնել շուրջ 45 հազար հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք:

Ռուսական «Անտիգրադ» ընկերության ներկայացուցիչն ԱԻ նախարարին մանրամասն ներկայացրեց հրթիռային կայանի աշխատանքի սկզբունքները:

Հայաստան են ներկրվել նորագույն արտադրության եւ բարձր արդյունավետությունն ապահովող վերջին սերնդի հրթիռային կայաններ: Կրակոցներն իրականացվում են ռադիոլոկացիոն կայանի տրամադրած տվյալների հիման վրա՝ ապահովելով թիրախավորման շատ մեծ ճշգրտություն: Արտաշավանում գտնվող ռադիոլոկացիոն կայանը եւս համալրվել նորագույն թվային սարքավորումներով, որի շնորհիվ՝

- կբարձրանա դրա գործողության կայունությունն ու հուսալիությունը, կապահովվի ամպերի պարամետրերի չափման ճշգրտության բարձրացումը, հեռավերահսկողությունն ու կարգաբերումը.

- կնվազեն սպասարկման ծախսերը:

Միաժամանակ իրականացվել են համակարգի ենթակառուցվածքների հիմնանորոգման աշխատանքներ (հրթիռների պահպանության համար անհրաժեշտ պահեստների նախապատրաստում, կայանի շենքի վերանորոգում, կայանների տեղադրման վայրերի ուսումնասիրություն եւ այլն):

Ծնորհակալություն հայտնելով իրականացված մեծածավալ աշխատանքի համար՝ նախարար Դ.Տոնոյանը հանձնարարեց ապահովել նաեւ մասնագետների վերապատրաստումը՝ նորագույն կայանների կառավարումն իրականացնելու համար:

ՀՀ կառավարության որոշմամբ Հայաստանում կարկտահարությունից պաշտպանության առավել արդյունավետ մեթոդներ ներդնելու նպատակով ներկայումս իրականացվող պիլոտային ծրագրի հիման վրա ՀՀ ԱԻ նախարարությունը կապահովի ծրագրի շարունակականությունը՝ ՀՀ մյուս մարզերի մշակովի հողատարածքները եւս առնելով նման կայանների պաշտպանության տակ:

Նշենք, որ համակարգում առկա 2 ռադիոլոկացիոն կայանները կարող են սպասարկել նմանատիպ 36 հրթիռային կայան:

«ԶԻ». Դաշնակներն ընդդեմ վարչապետի.

Նրանց հարաբերություններն ավելի են լարվել «Զորքող իշխանություն» թերթը գրում է. «ԶԻ» տեղեկություններով՝ տեւական ժամանակ է լարվել են վարչապետ Կարեն Կարապետյանի եւ դաշնակների հարաբերությունները:

«Անգեն աչքով էլ տեսանելի էլ տեսանելի է, թե ինչպես է դաշնակցական «Երկիր Մեդիա ՌԻՎ»-ով անխնա քննադատություն հնչում վարչապետի հասցեին՝ հանրությանն ի ցույց դնելով, որ Կարեն Կարապետյանը իր տրված խոստումները չի իրագործում: Ի մասնավորի՝ վերջերս տնտեսության զարգացման

նախարար Սուրեն Կարայանի ասուլիսից ցուցադրվեցին հատվածներ, որտեղ նախարարը դժվարանում է պատասխանել վարչապետի խոստացած եւ չկատարած 850 միլիոն դոլար ներդրումների մասին հարցին:



Նկատենք, որ վարչապետի ու դաշնակցության հարաբերությունների լարվածությունը խորքային է, քանի որ Կարեն Կարապետյանը պաշտոնավարման հենց առաջին պահին պաշտոնանկ արեց դաշնակցական Արծվիկ Մինասյանին՝ Էկոնոմիկայի նախարարի պաշտոնը վստահելով Սուրեն Կարայանին:

Արցախի ՊԲ-ն արդեն ունի տեխնիկապես վերագինված տեղեկատվական կենտրոն



Արցախի պաշտպանության բանակն արդեն ունի տեխնիկապես վերագինված տեղեկատվական կենտրոն: Այն ստեղծվել է «Յուքոմ» ընկերության օժանդակությամբ, իսկ «ՊանԱրմենիան Մեդիա Գրուպ»-ը պատրաստակամություն է հայտնել օգնել կադրերի վերապատրաստման հարցում: Կենտրոնի բացումից առաջ «Յուքոմի» խորհրդի նախագահ Գուրգեն Խաչատրյանն ու «ՊանԱրմենիան Մեդիա Գրուպի» գլխավոր տնօրեն Արմեն Արզումանյանը նախարարությունում հանդիպեցին Արցախի ՊԲ հրամանատար Լևոն Մնացականյանի, որի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց ՊԲ տեղեկատվական համակարգի տեխնիկական և մարդկային կարողությունների մշտական արդիականացման հարցում ինստիտուցիոնալ համագործակցության վերաբերյալ: «Տեղեկատվական կենտրոնի կարևորության մասին մենք համոզվել ենք 2016թ. ապրիլյան գործողություններից հետո: Ինչպես տեսնում եք, մենք որոշակի աշխատանքներ կատարել ենք, բայց սա բավարար չենք համարում, ընդլայնելու ենք և աշխատելու ենք «ՊանԱրմենիա Մեդիա Գրուպի» հետ՝ հաշվի առնելով իրենց տեսակետները կահավորման և հետագա աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Սահմանվելու է կարգ, որի մասին մենք կտեղեկացնենք», - ասաց նախարարը՝ նշելով, որ

տեղեկատվական կենտրոնն առավել համակարգված կդարձնի իրենց աշխատանքը:

«Մենք և մեր թիմն անընդհատ համաշխարհային տեխնոլոգիաների զարգացման կենտրոնում ենք և հիմա մեր փորձը ներդնում ենք սահմանային անվտանգության համակարգերի արդիականացման վրա: Տեղեկատվական կենտրոնը շատ կարևոր խնդիր է լուծելու. պատերազմական փուլերում շատ կարևոր է, որ լրատվությունը լինի արագ, հասարակությունն իմանա, թե ինչ է կատարվում: Խոսքն այս պարագայում այն մասին է, որ այդ փորձը, որը մեր թիմը ձեռք է բերում, ժամանակ առ ժամանակ կարողանանք օգտագործել տեղի համակարգերի համագինման, լրացման նպատակով», - ասաց Գուրգեն Խաչատրյանը:

«ՊանԱրմենիան Մեդիա Գրուպ»-ը բազմիցս ասել է, որ պատրաստ ենք աջակցելու և փորձել ենք մշտապես օգտակար լինել: Այսօր հանդիպման ժամանակ մենք նշեցինք, որ պատրաստ ենք օգնել եւ կադրերի վերապատրաստման, եւ ցանկացած նոր տեխնոլոգիաներ ըմբռնելու, օգտագործելու հարցում», - լրագրողների հետ զրույցում ասաց «ՊանԱրմենիան Մեդիա Գրուպ»-ի գլխավոր տնօրեն Արմեն Արզումանյանը՝ ընդգծելով, որ տեղեկատվական պատերազմը, պայքարն ու անվտանգությունը հակամարտությունների մաս են կազմում:

ՊԲ շտաբում կայացած հանդիպումից հետո Լևոն Մնացականյանը, Արմեն Արզումանյանն ու Գուրգեն Խաչատրյանն այցելեցին նորաբաց տեղեկատվական կենտրոն՝ ծանոթանալու կատարված աշխատանքներին: Այսուհետև նախարարությունն այս սրահում կարող է հրավիրել մամուլի ասուլիսներ: Տեխնիկապես հագեցած մի սենյակ էլ նախատեսված է լրատվամիջոցների ներկայացուցիչների համար: Համակարգիչներ, արագ ինտերնետ կապ, քաղաքային հեռախոսներ յուրաքանչյուր սեղանին. բոլոր պայմանները կան հարմարավետ աշխատանքի համար: Սա նախարարի համար բավարար չէ, պատրաստվում են ընդլայնել տարածքն ու այստեղ տեղափոխել նաև նախարարության մամուլի բաժնի աշխատակիցներին:

Արցախի Հանրապետության ԱԳՆ ղեկավարն ընդունել է մեքսիկացի պատգամավորներին



Հոկտեմբերի 24-ին Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Մասիս Մայիլյանն ընդունել է ճանաչողական այցով Արցախ ժամանած Մեքսիկայի Միացյալ Նահանգների Պատգամավորների պալատի Մեքսիկա-Հայաստան բարեկամության խմբի անդամներ Բլանկա Մարգարիտա Կուատա Դոմինգեսին, Մարիա

Կրիստինա Տերեսա Գարսիա Բրավոյին եւ Կառլոս Էռնանդես Միրոնին:

Մասիս Մայիլյանը ողջունել է մեքսիկացի պատգամավորների այցն Արցախ եւ հույս հայտնել, որ այն կդառնա երկկողմ համագործակցության հաստատմանն ուղղված առաջին քայլը: Այս համատեքստում տեղի ունեցավ փոխգործակցության հեռանկարային ուղղությունների վերաբերյալ կարծիքների փոխանակում:

Հանդիպման ընթացքում արտաքին գործերի նախարարը պատգամավորներին է ներկայացրել նաեւ Արցախի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները՝ անդրադառնալով Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման, ինչպես նաեւ ադրբեջանա-ղարաբադյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացներին:

Հանդիպմանը ներկա է եղել նաեւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը:

«Իրատես». Վերջին օրերին Հայաստանում կրկին ակտիվացել են մատոնները. որն է նրանց այցի նպատակը



«Իրատես» թերթը գրում է. «Մեր տեղեկություններով՝ վերջին օրերին Հայաստանում կրկին ակտիվացել են մատոնները: Հայաստան եկած մատոնական օթյակի անդամներն իրենց նորաստեղծ օթյակի աշխատանքներն են ճշգրտում: Ի դեպ, մատոնները կրկին Փրանսիայից են ժամանել:

Հիշեցնենք, որ այս տարվա ապրիլին Հայաստան էր ժամանել Փրանսիայի «Մեծ Արեւելք» մատոնական օթյակի (Grand Orient de France) ղեկավար, Մեծ վարպետ Քրիստոֆ Աբբասը, որը հայտարարեց, թե Հայաստանում հիմնադրվում է «Մեծ Արեւելքի» մատոնական օթյակը:

Ի դեպ, ըստ Աբբասի, Հայաստանում կլինի ինքնավար ու անկախ ֆրանկոմատոնական օթյակ: Ընդհանրապես մատոնների ու մատոնականության մասին շատ առասպելներ կան, որոնք շարունակում են այդպիսին մնալ, քանի դեռ այս օթյակները գաղտնիության քողով են պատված:

Փրանսիացի այս մատոն էլ հայտարարեց, որ Հայաստանում ունեն ընկեր եւ եղբայր հայեր, դրա համար էլ ցանկացել են այստեղ եւս օթյակ բացել, սակայն ոչ ոք չգիտի, թե ովքեր են հայ մատոնները: Ո՛չ վերջիններս են բացահայտում իրենց ով լինելը, ո՛չ էլ տվյալ կառույցի ղեկավարներն են հստակ ու բաց խոսում իրենց աշխատանքի եւ հիմնադրման նպատակների

մասին: Փոխարենն ավելի է ամրապնդվում այն համոզմունքը, թե աշխարհը «մատոններն են ղեկավարում»:

Իրանի փոխնախագահին հրավիրել են Հայաստան

ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանն ու Իրանի նախագահի առաջին տեղակալ Էսհադ Ջահանգիրին այսօր՝ հոկտեմբերի 9-ին Թեհրանում կայացած հանդիպմանը նաեւ անդրադարձել են տարածաշրջանային զարգացումներին:

Այս համատեքստում Կարեն Կարապետյանը շնորհակալություն է հայտնել իրանական կողմին ԼՂ հիմնահարցում հավասարակշռված դիրքորոշման համար:

Կարեն Կարապետյանն Էսհադ Ջահանգիրին պաշտոնական այցով հրավիրել է Հայաստան, ինչը սիրով ընդունվել է:

Հանդիպմանը քննարկվել են նաեւ տեղեկատվական տեխնոլոգիաների, կապի, տրանսպորտի, գյուղատնտեսության, զբոսաշրջության, կրթության, մշակույթի բնագավառներում համագործակցությանը վերաբերող հարցեր:




Կարեն Կարապետյանը եւ Ալի Լարիջանին բարձր են գնահատել հայ-իրանական քաղաքական երկխոսությունը



Իրան կատարած պաշտոնական այցի շրջանակում ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը հանդիպում է ունեցել Իրանի Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի հետ: Կարեն Կարապետյանը նախ փոխանցել է ՀՀ ԱԺ նախագահ Արա Բաբոյանի ջերմագին ողջույնները եւ ավելացրել, որ Հայաստանը մշտապես կարելուորում է Իրանի հետ բարեկամական հարաբերությունները, որոնք շարունակում են զարգանալ փոխըմբռնման մթնոլորտում:

Հանդիպման ընթացքում քննարկվել են տարածաշրջանային խնդիրներին եւ երկկողմ համագործակցությանը վերաբերող հարցեր:

Այի Լարիջանին անհրաժեշտ է համարել տնտեսական համագործակցության շարունակական ամրապնդումը եւ այդ գործում կարելու է նաեւ երկու երկրների խորհրդարանների միջեւ կապերի ընդլայնումը: Այդ առումով գրուցակիցները ընդգծել են երկու երկրների խորհրդարանների բարեկամության խմբերի գործունեության, փոխադարձ այցելությունների, խորհրդարանների հանձնաժողովների մակարդակով հարաբերությունների զարգացման փաստը եւ նշել, որ հայ-իրանական հարաբերությունների հետագա զարգացմանն իր նպաստն է բերում նաեւ օրենսդիր մարմինների համագործակցությունը: «Իրանն ու Հայաստանը միմյանց հետ կապված են բարեկամական խորը արմատներով եւ մեր նպատակն է, որպեսզի երկկողմ քաղաքական ու տնտեսական համագործակցությունը շարունակի զարգանալ: Առկա ճգնաժամերի պայմաններում միմյանց հետ ավելի շատ խորհրդակցելու անհրաժեշտություն կա, եւ այդ առումով ցանկանում եմ գոհունակություն հայտնել մեր խորհրդարանական համագործակցության մակարդակից: Լիահույս եմ, որ Ձեր այցը նոր լիցք կհաղորդի երկկողմ հարաբերություններին», - նշել է նա:




Կարեն Կարապետյանն ասել է, որ շատ բովանդակալից հանդիպում է ունեցել ԻԻՀ առաջին փոխնախագահի հետ՝ ընդգծելով, որ հայկական կողմը շատ վճռական է տրամադրված իրականացնելու ձեռք բերված պայմանավորվածությունները, մասնավորապես՝ տնտեսական ոլորտում, ինչը նոր լիցք կհաղորդի երկկողմ հարաբերություններին: Այի Լարիջանին իր հերթին ընդգծել է, որ հայ-իրանական տնտեսական փոխգործակցության հարցում որեւէ սահմանափակում կամ խոչընդոտ գոյություն չունի, եւ Իրանի խորհրդարանը շատ դրական է տրամադրված հարաբերություններն էլ ավելի ընդլայնելու հարցում: Նրա խոսքով՝ երկկողմ տնտեսական օրակարգը շատ հագեցած է, եւ առկա են փոխգործակցությունը զարգացնելու մեծ հնարավորություններ՝ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձեւաչափերում:

Կարեն Կարապետյանն իր գործընկերոջը ներկայացրել է Սյունիքում ազատ տնտեսական գոտու գործարկման ծրագիրը՝ կարելու էլով դրանում իրանական ընկերությունների ակտիվ մասնակցությունը: «Համոզված եմ, որ շատ մեծ հնարավորություններ ունենք կրկնապատկելու եւ անգամ եռապատկելու մեր

հարաբերությունները տնտեսական ոլորտում», - ասել է ՀՀ վարչապետը:

Կողմերն անդրադարձել են նաեւ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին՝ երկուստեք ընդգծելով, որ այն պետք է լուծվի բացառապես խաղաղ բանակցային ճանապարհով:

Մենք Հայաստանի հետ համագործակցության համար որեւէ սահմանափակում չունենք. Իրանի փոխնախագահ



Մենք մեր հարեւանների հետ ունենք լավ հարաբերություններ, եւ դրանց զարգացման նպատակով կատարվել են լուրջ աշխատանքներ: Այդ մասին ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի հետ հանդիպմանն ասել է Իրանի Իսլամական Հանրապետության առաջին փոխնախագահ Էսհադ Ջահանգիրին:

«Մեր երկու երկրները գտնվում են մշակութային, քաղաքակրթային եւ աշխարհագրական նույն տարածաշրջանում, եւ մեր երկրների հարաբերությունները բխում են դարերի խորքից ու հիմնված են երկու ժողովուրդների եւ մշակութային ընդհանրությունների վրա: Մեր հարաբերությունները մշտապես հիմնված են եղել կայունության վրա, եւ Աստծո ցանկությամբ այդպես էլ կշարունակվի: Իրանի տարբեր քաղաքներում ապրող մեր հայ քաղաքացիներն ունեն ջերմ կապեր Հայաստանի Հանրապետության իրենց հայրենակիցների հետ, ինչը լավ կամուրջ է երկու երկրների հարաբերությունների զարգացման համար: Մենք մեր հարեւանների հետ ունենք լավ հարաբերություններ, եւ դրանց զարգացման նպատակով կատարվել են լուրջ աշխատանքներ: Մեր հարեւանների հետ վարվող արտաքին քաղաքականության օրակարգում Հայաստանի Հանրապետությունն ունի իր հատուկ տեղը», - ասել է նա:

«Մենք Հայաստանի հետ քաղաքական, տնտեսական եւ մշակութային բնագավառներում համագործակցության համար որեւէ սահմանափակում չունենք, եւ Հայաստանի Հանրապետության մեծարգո վարչապետի այցը երկու երկրների միջեւ քաղաքական, տնտեսական եւ մշակութային ոլորտներում հարաբերությունների զարգացման տեսակետից կարող է հատուկ դեր ունենալ: Առանձնագրույցի ու ընդլայնված կազմով բանակցությունների ընթացքում քննարկվեցին հարցեր, որոնք կապահովեն երկու երկրների հարաբերությունների հետագա զարգացումը: Քանի որ Հայաստանի Հանրապետությունը Եվրասիական տնտեսական միության անդամ է եւ լավ հարաբերություններ ունի Եվրոպական միության հետ, ապա այս հարթակը երկու երկրների հարաբերությունների զարգացման համար կարող է դրական

լինել: Այն ընկերությունների համար, որոնք զբաղված են տրանսպորտի կապալառու գործունեության, շինարարության եւ տնտեսության տարբեր բնագավառներում, պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ համապատասխան պայմաններ կստեղծվեն՝ նրանց ակտիվության ընդլայնման նպատակով: Պարսից ծոցից Սեւ ծով անցնող տրանսպորտային միջանցքներից մեկը կարող է լինել Հայաստանը: Էլեկտրաէներգիայի եւ գազի փոխանակման ծրագրի շրջանակում ունենք երրորդ բարձրավելու գծի շինարարությունը, ինչպես նաեւ այսօր ձեռք բերված պայմանավորվածությունները կարող են խթան հանդիսանալ համագործակցության զարգացման համար: Կարծում եմ, որ մասնավոր հատվածի մեր ներկայացուցիչները կարող են օգտվել ստեղծվող պայմաններից, երկու երկրներում ազատ տնտեսական գոտիների առկայությունը նույնպես կարող է գործարար շրջանակների համագործակցության զարգացման խթան հանդիսանալ»,- ասել է Զահանգիրին:

Նաիրա Զոհրաբյանը ԵԽԽՎ-ին կոչ է արել պարզել, թե ինչպե՞ս է Հունգարիան 7.6 մլն դոլարով Բաքվին վաճառել Սաֆարովին



ԵԽԽՎ-ում, այսօր՝ հոկտեմբերի 9-ին, աշնանային նստաշրջանում հայկական պատվիրակության անդամ Նաիրա Զոհրաբյանը ԵԽԽՎ-ին կոչ է արել պարզել, թե ինչպե՞ս է Հունգարիան 7.6 միլիոն դոլարի դիմաց Բաքվին վաճառել մարդասպան Ռամիլ Սաֆարովին:

Նշենք, որ ԵԽԽՎ աշնանային նստաշրջանի օրակարգում Ադրբեջանին առնչվող մի շարք հարցեր կան: Իր ելույթում հայկական պատվիրակության անդամ Նաիրա Զոհրաբյանը Դոն Կոռուպցիա անունով հայտնի Պեդրո Ագրամունտի հրաժարականը համարել է ընդամենը առաջինը քայլը՝ ԵԽԽՎ-ն կոռուպցիայի սարդոստայնից մաքրելու համար, ինչպես նաեւ կոչ է արել պարզել, թե ինչպե՞ս է Հունգարիան 7.6 միլիոն դոլարի դիմաց Ադրբեջանին վաճառել Ռամիլ Սաֆարովին:

Զոհրաբյանն իր խոսքում, մասնավորապես, նշել է հետևյալը.

«Քաղաքական իր բժիշկների հորդորով Դոն Կոռուպցիա անունով հայտնի Պեդրո Ագրամունտը հոկտեմբերի 6-ին հրաժարական տվեց: Ես շնորհավորում եմ Վեհաժողովի այն պատգամավորներին, որոնք թույլ չտվեցին, որ ԵԽԽՎ անունը նույնացվի կոռուպցիայի եւ ամենաթողության հետ, որտեղ ինչ-որ մեկը կարող է պատգամավոր գնել, վաճառել, վերավաճառել եւ պարտադրել սպասարկել իր երկրի ավտորիտար օրակարգը:

Բայց արդյոք Պեդրո Ագրամունտի վրա վերջակետ դնելը բավարար է մեր Վեհաժողովի դեմքից կոռուպցիայի սարդոստայնը մաքրելու համար: Պարզվում է, կոռուպցիոն

հայտնի մեծ լվացքի մեջ ներգրավված են եվրոպացի տարբեր գործիչներ, ովքեր տարիներ շարունակ դանիական Danske Bank-ի էստոնական մասնաճյուղից հսկայական գումարներ են ստացել: Ես հույս ունեմ, որ հունգարական պատվիրակության մեր գործընկերները իրենց երկրի քաղաքական ղեկավարությանը հարց կուղղեն՝ կապված սկանդալային այն բացահայտման հետ, որ Հունգարիան 7.6 միլիոն դոլարով վաճառել է մարդասպան Ռամիլ Սաֆարովին, ով կացնահարել էր հայ սպա Գուրգեն Մարգարյանին, երբ վերջինս եղել է քնած:

Կարծում եմ, հունգարացի մեր գործընկերներին պետք է հետաքրքրի, եթ ինչպե՞ս են Metastar Invest ընկերության կողմից հունգարական MKB բանկում բացված մի հաշվեհամարի վրա փոխանցվել միլիոնավոր դոլարներ եւ թե ի՞նչ կապ ունեն այդ հաշվեհամարները Հունգարիայի քաղաքական իշխանության հետ: Ի դեպ, հիշեցնեմ, որ Metastar Invest-ն այն ընկերությունն է, որը պարբերաբար գումարներ է փոխանցել ԵԽԽՎ նախկին փոխնախագահ Լուկա Վոլոնտեին, ով այս պահին, ամենայն հավանականությամբ, իտալական դատախազությանը պատմում է իր եւ իր տոտալիտար ընկերոջ ջերմ հարաբերությունների մասին:

Հարգելի գործընկերներ,


Հունիսյան նստաշրջանում մենք պաշտպանեցինք անկախ հետաքննող մարմնի ստեղծումը, որը վստահ եմ, անաչառորեն հետաքննում է կոռուպցիոն բոլոր փաստերը, որոնք վերաբերում են մեր Վեհաժողովին: Իսկ նման փաստեր, որոնք վերջերս միջազգային մամուլի թոփ թեման էին, բազմաթիվ են: Ես միանում եմ «Թրանսպարանսի Ինթերնեյշնլը» կազմակերպության նախագահի այն հայտարարությանը, ով ասում է՝ «ուղղակի շոկային է տեսնել, թե ինչպես այնպիսի հարգված կառույցում, ինչպիսին ԵԽԽՎ-ն է, որոշ քաղաքական գործիչներ վաճառքի են հանվում, եւ փակում իրենց աչքերը կոռուպցիայի եւ մարդու իրավունքների խախտումների վրա»:

Լիտվայի Սեյմը օրերս դիմել է Լիտվայի ֆինանսական հանցագործությունները հետաքննող մարմնին, պահանջելով ուսումնասիրել ԵԽԽՎ-ի հետ կապված կոռուպցիոն սկանդալներում լիտվացի գործիչների հնարավոր ներգրավվածությունը:

Ես հույս ունեմ, որ Լիտվայի օրինակին կհետեւեն ԵԽ անդամ բազմաթիվ երկրներ եւ վստահեցնում եմ, որ Դոն Պեդրոյի աղանդի բազմաթիվ հետևորդներ ստիպված կլինեն քաղաքական ապաստան խնդրել իրենց կերակրող երկրից»:

Մեծապես կարելորում ենք Իրանի հետ ջերմ հարաբերությունները. ՀՀ վարչապետը հանդիպել է Իրանի նախագահին

Հայաստանը մեծապես կարելորում է հարեւան Իրանի հետ ունեցած ջերմ եւ բարեկամական հարաբերությունները, որոնք ունեն դարավոր պատմական լուրջ հիմքեր: Այս մասին, այսօր՝ հոկտեմբերի 10-ին, Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի նստավայրում Իրանի նախագահ Հասան Ռոհանիի հետ հանդիպման ժամանակ նշել է ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը:



Կառավարությունից հայտնում են, որ Կարեն Կարապետյանը շնորհակալություն է հայտնել հյուրընկալության համար եւ փոխանցել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ողջույններն ու բարեմաղաքները: «Հայաստանը մեծապես կարելուորում է հարեւան Իրանի հետ ունեցած ջերմ եւ բարեկամական հարաբերությունները, որոնք ունեն դարավոր պատմական յուրք հիմքեր եւ հիմնված են փոխադարձ շահերի վրա: Կարող եմ ուրախությամբ նշել, որ այդ հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի վրա, եւ երկկողմ համագործակցությունը շարունակում է զարգանալ փոխըմբռնման մթնոլորտում», - ասել է ՀՀ վարչապետը: Հասան Ռոհանին, ողջունելով Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի այցն Իրան, համոզմունք է հայտնել, որ այն կնպաստի հայ-իրանական բարեկամական հարաբերությունների հետագա խորացմանը տարբեր բնագավառներում: ԻհՀ նախագահն ընդգծել է, որ պատրաստակամ է օժանդակել երկու երկրների կառավարությունների նախաձեռնություններին, ինչպես նաեւ համատեղ ծրագրերի իրականացմանը: Զրուցակիցները կարելուորել են մի շարք ոլորտներում, մասնավորապես, էներգետիկ բնագավառի, գյուղատնտեսության, տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, «Սյունիք» եւ «Արաս» ազատ տնտեսական գոտիների համագործակցության խորացումն ու ընդլայնումը, երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառության ծավալների ավելացումը: ՀՀ կառավարության ղեկավարն ընդգծել է հայ-իրանական քաղաքական երկխոսության բարձր մակարդակը: Կողմերն անդրադարձել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն ու տարածաշրջանային խնդիրներին առնչվող հարցերի: Կարեն Կարապետյանը նշել է, որ Հայաստանը բարձր է գնահատում Իրանի հավասարակշռված վերաբերմունքը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցում, ինչը տարածաշրջանային խաղաղության եւ անվտանգության ապահովման կարելուոր երաշխիքներից է: Իրանի նախագահը ՀՀ նախագահին ու հայ ժողովրդին է փոխանցել իր ջերմ բարեմաղաքներն ու բարձր գնահատել հայ համայնքի դերը երկրի տարբեր ոլորտների զարգացման գործում:

Արցախի տաղավարի մոտ ադրբեջանցիները սադրանքի են դիմել միջազգային ցուցահանդեսում



Հոկտեմբերի 12-ից 14-ը Արցախի Հանրապետությունը ներկայացված էր ՌԴ Սանկտ-Պետերբուրգ քաղաքում ընթացող «Ինվեստբա 2017» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսում: Այդ մասին հայտնում է «Արցախաբեր» : ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության նախարարության տեղեկացմամբ՝ Արցախը՝ որպես զբոսաշրջային ուղղություն հետաքրքրություն է առաջացրել տուրիզմի ոլորտի մասնագետների եւ ցուցահանդեսի այցելուների մոտ:

Գերատեսչության աշխատակիցների կողմից տարվել են արդյունավետ աշխատանքներ՝ ուղղված տեղում Արցախի զբոսաշրջային ներուժի մասին տեղեկացվածության բարձրացմանը: Մասնավորապես՝ բաժանվել է մեծ քանակությամբ զբոսաշրջային գրականություն, տեսահոլովակներով սկավառակներ, քարտեզներ, բացի այդ՝ ցուցահանդեսի մասնակիցներին ներկայացվում էին Արցախ այցելելու եւ շրջապայություններ կազմակերպելու հնարավորությունները:

Ցուցահանդեսի ընթացքում տեղ են գտել նաեւ ադրբեջանցիների սադրանքները: Այսպես, ցուցահանդեսի ողջ ընթացքում տարբեր խողովակներով Ադրբեջանի Հանրապետության մի շարք պաշտոնական անձինք, համայնքի ներկայացուցիչներ փորձում էին ճնշում գործադրել ցուցահանդեսի կազմակերպիչների վրա՝ ԱՀ պատվիրակության աշխատանքները դադարեցնելու պահանջով: Հասկանալով, որ իրենց ջանքերը ապարդյուն են՝ ցուցահանդեսի վերջին օրը մի խումբ ադրբեջանցիներ փորձել են տեղում խոչընդոտել Արցախի տաղավարի աշխատանքները՝ լարվածություն ստեղծելով տաղավարի շուրջ: Սակայն ձեռնարկված միջոցառումների շնորհիվ հաջողվեց կասեցնել նաեւ այդ սադրանքը եւ ցուցահանդեսի անվտանգության աշխատակիցների ուղեկցությամբ ադրբեջանցիները դուրս են հանվել ցուցահանդեսի տարածքից:

Ինչպես հայտնում է ԱՀ տաղավարի պատասխանատուներից Արտակ Գրիգորյանը, պատվիրակությունը մինչեւ վերջին րոպեն առանց որեւէ խափանումների կամ խոչընդոտների մասնակցել է ցուցահանդեսին:

Ցուցահանդեսում Արցախի տաղավարի աշխատանքները կազմակերպվել էին ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ զբոսաշրջության նախարարության կողմից:

Իրանի շուկա դժվար է դուրս գալ, բայց հայկական ոչխարի միսը պատրաստ են այնտեղ գնել. «Ոսկե կացին»



Իրանի շուկա դժվար է դուրս գալ, բայց հայկական ոչխարի միսը, միեւնույնն է, պատրաստ են այնտեղ գնել: Այս մասին ասել է «Ոսկե կացին» հայ-իրանական սպանդանոցի մենեջերներից Արթի Ավանեսյանը, որը «ԱրմՊրոդէքսպո 2017» ցուցահանդեսին ներկայացնում էր ընկերությունը: Ցավոք սրտի, Իրանի սպանդանոցների համար դժվար է գնել այն ամենը, ինչ նրանք գնում էին մինչև 2012 թվականին արժույթի անկումը: Այդուհանդերձ, իրանցիները գնահատում են որակյալ ապրանքը: «Մեր գործընկերները մեծածախ ներմուծողներ են Իրան եւ ասում են, որ խանութներն ու ռեստորաններն իրենց հետ կայուն աշխատում են: Իսկ դա նշանակում է, որ հայկական ամիսը մրցունակ է տեղական շուկայում ոչ միայն որակով, այլ նաեւ գնով եւ անգամ տրանսպորտի ծախսերով», - հավելել է նա:

Հայտարարություն. Սարգսյանն ու Ալիևը համաձայնել են քայլեր ձեռնարկել բանակցությունների ակտիվացման համար



Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումն ընթացել է կառուցողական մթնոլորտում: Այս մասին ասված է Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների եւ ԵԱՀԿ ՄԻԾ համանախագահների համատեղ հայտարարության մեջ: Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիևի հանդիպումը տեղի է ունեցել հոկտեմբերի 16-ին Ժնևում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովի (Ռուսաստան), Ստեֆան Վիսկոնտիի (Ֆրանսիա), Էնդրյու Շոֆերի (ԱՄՆ) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջել Կասպրիշկի միջնորդությամբ: Հանդիպմանը մասնակցել են նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանը եւ Էլմար Մամեդյարովը: Ավելի ուշ

նախագահները բանակցությունները շարունակել են առանձին:

«Հանդիպումն անցել է կառուցողական մթնոլորտում, - ասվում է հայտարարության մեջ: - Նախագահները համաձայնության են եկել միջոցներ ձեռնարկել բանակցային գործընթացն ակտիվացնելու եւ շփման գծում լարվածությունը թուլացնելու ուղղությամբ: Համանախագահները գոհունակություն են հայտնել երկարատեւ ընդմիջումից հետո վերսկսված այս անմիջական բանակցություններից: Նրանք պատրաստ են աշխատել կողմերի հետ՝ որպես միջնորդ հանդես գալու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման հարցում: Մոտ ապագայում համանախագահները կկազմակերպեն աշխատանքային հանդիպումներ արտգործնախարարների հետ»:

Մահացել է Լեւոն Հայրապետյանը



Անագատության մեջ մահացել է գործարար եւ բարեգործ Լեւոն Հայրապետյանը: Այս տեղեկությունը հաստատել են Հայրապետյանի հարազատները:

Լեւոն Հայրապետյանը մահացել է հոկտեմբերի 18-ին 68 տարեկանում:

Գործարարը մեծ ավանդ է ունեցել Արցախի զարգացման եւ բարեկարգման գործում: Նրա միջոցներով ծրագրեր են իրականացվել Մարտակերտի շրջանի Վանք գյուղում, վերանորոգվել է Գանձասարի վանական համալիրը:

Կյանքի վերջին տարիները Հայրապետյանը դատական հետապնդումների մեջ անցկացրեց:

Գործարարը դատապարտվել է չորս տարվա ազատազրկման ընդհանուր ռեժիմի գաղութում՝ նախկին սենատոր Իգոր Իզմեստյելի մորից 700 հազար դոլար կորզելու համար:

Լեւոն Հայրապետյանը 2016 թվականին տեղափոխվել էր Մորդովիայի բանտ, որը համարվում է Ռուսաստանի ամենասարսափելի բանտերից մեկը:

2016-ի ապրիլին գործարարին ազատ արձակելու կոչ-հայտարարություն էին տարածել նաեւ ԼՂՀ ԱԺ խմբակցությունները. «Հաշվի առնելով Լեւոն Հայրապետյանի օրեցօր վատթարացող առողջական վիճակը՝ ԼՂՀ ԱԺ պատգամավորական խմբակցությունները Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմիններին հորդորում են մարդասիրական վերաբերմունքից ելնելով գործող օրենսդրության շրջանակներում վերանայել կալանքի պայմանները, օբյեկտիվ վերաքննությամբ էապես մեղմել սահմանված պատիժը եւ ազատ արձակել նրան»:

Նշենք, որ Լեւոն Հայրապետյանը տարիներ շարունակ Արցախում իրականացրել է բազմաթիվ բարեգործական ծրագրեր՝ նպաստելով հայրենի երկրի զարգացմանը: Նրա ծրագրերն իրագործվել են Ստեփանակերտում, Մարտակերտի շրջանի Վանք գյուղում: Մասնավորապես, Հայրապետյանի միջոցներով 2000-2002 թվականներին վերակառուցվել է հայկական հռչկավոր Գանձասարի վանական համալիրը (13-րդ դար), որը ներկայիս օրերում Դարաբադի ամենաբարեկարգված սրբավայրերից մեկն է համարվում: Լեւոն Հայրապետյանը իր վրա է վերցրել նաև «Հյուսիս-Հարավ» ավտոմայրուղու այն հատվածի շինարարության ծախսերը, որն անցնում է Գանձասարի վանական համալիրի շրջակայքով: 2007 թվականին Լեւոն Հայրապետյանը ֆինանսավորել է 2,5 միլիոն քմ տարողությամբ ջրամբարի կառուցումը Մարտակերտի շրջանում գտնվող Խաչեն գետի վրա՝ տրամադրելով 7 մլն դոլար:

Հիշեցնենք, որ Լեւոն Հայրապետյանը մեղադրվում է իրավաբան Սերգեյ Անտոնովի հետ Բաշկիրիան ներկայացնող նախկին սենատոր Իգոր Իզմեստելի մորից՝ իր որդու դատավճիռը մեղմելու նպատակով 700 000 դոլար վերցնելու մեջ: Ըստ քննության, Հայրապետյանը գումարը վերցնելուց հետո էապես չի կարողացել ազդել դատավճիռի մեղմման վրա, ինչի արդյունքում Իզմեստելը դատապարտվել է ցմահ ազատազրկման՝ մի շարք ծանր հացագործությունների իրականացման համար:

Հայրապետյանը ձերբակալվել է 2014թ. հուլիսին՝ Իզմեստելի խոստովանական ցուցմունքներից հետո: Այնուհետև նրա նկատմամբ կիրառվել է տնային կալանք, սակայն 2016-ի ապրիլին նա նորից կալանավորվել է եւ գնվում էր անազատության մեջ:

Նրա փաստաբան Հայկազ Մակարյանը բազմիցս դիմել էր ՀՀ իշխանություններին, որպեսզի քննարկման առարկա դարձնեն Լեւոն Հայրապետյանի արտահանձնման հարցը:

Լեւոն Հայրապետյանի հուղարկավորությունը կկայանա Մոսկվայում: Նա ցանկություն է հայտնել հուղարկավորվել ծնողների կողքին՝ Մոսկվայի հայկական գերեզմանատանը:

Հայաստանն ու Ռուսաստանը շարունակում են բանակցել Sukhoi Superjet-ի հիմքի վրա ավիաբեկորություն ստեղծելու շուրջ



Հայաստանն ու Ռուսաստանը շարունակում են ռուսական Sukhoi Superjet 100 (SSJ100) օդանավի հիմքի վրա հայկական ավիափոխադրիչի ստեղծման շուրջ բանակցությունները, ասված է ՌԴ Տրանսպորտի հաղորդագրության մեջ, փոխանցում է «ՌԻԱ Նովոստի»-ն:

Հաղորդվում է, որ հոկտեմբերի 24-ին Երեւանում ՌԴ տրանսպորտի նախարար Մաքսիմ Սոկոլովը մասնակցել էր ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդևի այցի շրջանակում կայացած միջոցառումներին:

«Նախարարը տեղյակ է պահել, որ ՌԴ Արդյունաբերական առևտրի նախարարության գծով աշխատանք է ընթանում Հայաստանում ռուսական Sukhoi Superjet 100 (SSJ100) օդանավի հիմքի վրա հայկական ավիափոխադրիչի ստեղծման շուրջ», – ասված է հաղորդագրության մեջ:

Մենք Միացյալ Նահանգներում հասկանում ենք, որ Հայաստանը պետք է ամուր հարաբերություններ ունենա Ռուսաստանի հետ. ԱՄՆ դեսպան



Հայաստանը պետք է ամուր կապեր ունենա հնարավորինս մեծաթիվ երկրների հետ. Հայաստանը դժվարին հարեւանության մեջ է գտնվում, եւ հնարավորինս շատ երկրների հետ ամուր կապեր ունենալը անչափ կարևոր է: Այս մասին, «Ամերիկայի» ձայնին տված հարցազրույցում նշել է Հայաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսը:

Հարցին, թե արտաքին քաղաքական կողմնորոշման առումով, Ձեր կարծիքով, ի՞նչ ձգտումներ ունի հայաստանյան հասարակությունը, դեպի Արեւմուտք է արդյոք այդ կողմնորոշումը, եւ հնարավոր է արդյոք դրա իրականացումը աշխարհաքաղաքական ներկա իրադրությունում, դեսպանը պատասխանել է. « Շատերն են այս նույն հարցն ինձ ուղղում, եւ ես ուզում եմ, որ Արեւմուտքի, իր անմիջական հարեւանների եւ Ռուսաստանի հետ Հայաստանի հարաբերությունների նկատմամբ մեր դիրքորոշումը լինի հստակ:

Մենք Միացյալ Նահանգներում հասկանում ենք, որ Հայաստանը պետք է ամուր հարաբերություններ ունենա Ռուսաստանի հետ: Դա ունի իր պատմական հիմքերը, աշխարհագրական եւ տնտեսական կապեր կան երկու երկրների միջեւ: Երբեք խնդիրն այնպես չի եղել, որ պետք է կամ այս ուղղությամբ գնալ, կամ գնալ միայն մյուս ուղղությամբ: Հայաստանը պետք է եւ՝ Արեւմուտքի հետ լավ հարաբերություններ ունենա, եւ՝ Միացյալ Նահանգների, եւ՝ Ռուսաստանի հետ: Այդ հարաբերությունները մեկը մյուսին չեն բացառում»:

ԱՄՆ դեսպանի խոսքով, Հայաստանը պետք է տարածաշրջանում փորձի առավել բարելավել հարաբերություններն իր անմիջական հարեւանների հետ՝ Վրաստանի, Թուրքիայի, ինչ-որ մի պահի՝ Ադրբեջանի հետ. «Սկզբում դուք հարցրիք՝ արդյոք Հայաստանը իր ներուժն ամբողջությամբ է իրացրել լինի տնտեսական զարգացման, թե՛ ժողովրդավարության զարգացման ասպարեզներում: Շատ ու շատ խնդիրներ նաեւ պայմանավորված են

Լեռնային Ղարաբաղի հարցի չկարգավորված լինելու հանգամանքով, կոռուպցիայի խնդիրը կա, ազգային անվտանգության խնդիրը կա: Եվ ես կուզենայի, որ Հայաստանը կարողանար կարգավորել Լեռնային Ղարաբաղի հարցը: Հասկանում եմ, որ դա դժվար գործ է՝ երկուստեք փոխզիջումներ է պահանջում»:

Փոխնախարար. Այժմ Հայաստանը կարող է իր դրոշը բարձրացնել նավերի վրա



«Այժմ Հայաստանը կարող է իր դրոշը բարձրացնել նավերի վրա», - հոկտեմբերի 26-ին ԱԺ-ում հայտարարել է Տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների փոխնախարար Գագիկ Գրիգորյանը՝ ներկայացնելով Միջազգային ծովային կազմակերպության մասին կոնվենցիան, որին կառավարությունն ուզում է միանալ: Գրիգորյանը նաեւ հավելել է, որ այդ դեպքում Հայաստանի ընկերությունները կարող են իրենց նավերի ու լաստանավերի վրա (եթե ցանկություն ունեն ձեռք բերել) դնել հայկական դրոշը: Հանրապետությունը կարող է ընդունել եւ արտասահմանյան նավերի հաշվառումները, քանի որ այդ հարցում ծովային իրավունքի սահմանափակումներ չկան: Բացի այդ, կոնվենցիան կկանոնակարգի այդպիսի նավերի ընդունումը նավահանգիստներում:

Փոխնախարար. Հայաստանը կարող է գործարկել սեփական հրթիռներն ու մասնակցել տիեզերական ուսումնասիրություններին




«Հայաստանը կարող է գործարկել սեփական հրթիռներն ու մասնակցել տիեզերական ուսումնասիրություններին», - հոկտեմբերի 26-ին ԱԺ-ում հայտարարել է ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների փոխնախարար Արման Խաչատրյանը՝ ներկայացնելով «Լուսնի եւ երկնային այլ մարմինների վրա պետությունների գործունեության կարգավորման մասին» համաձայնագիրը:

Համաձայնագրի դրույթների մեծ մասը Հայաստանի համար դժվար թե կիրառելի թվա (երկնային մարմինների վրա ռազմական գործողություններ անցկացնելու մերժում, ուղեծրում միջուկային զենքի տեղակայում եւ այլն), սակայն այս համաձայնագրի ընդունումը Հայաստանին թույլ կտա ո իր ուղեծրային դիրքերը գործարկել արբանյակների համար: Հանրապետությանը տրվել է այդպիսի 2 դիրք՝ Ռուսաստան, Եվրոպա, Հյուսիսային Աֆրիկա եւ Մերձավոր Արեւելք հեռարձակման ծածկույթով: «Հանրապետությունը կարող է նաեւ մասնակցել տիեզերական միջազգային հետազոտական ծրագրերին», - հավելել է Խաչատրյանը:

Արեւմտյան Հայաստան

Վանի Արճեշում գտնվող Արծվաբեր վանքը վերջնականապես անհետանալու վտանգի տակ է



Վանի Արճեշ գավառի Սալմանաղա թաղամասում գտնվող հայկական Արծվաբեր վանքը վերջնականապես անհետանալու վտանգի տակ է: Գանձագողերը տասնյակ խորը փոսեր են փորել վանքում, իսկ տեղի բնակիչներն իրենց աղբը լցնում են այնտեղ:

Այս մասին հայտնում է Akunq.net-ը: Ըստ կայքի՝ հայկական աղբյուրներում նշված է, որ սույն վանքը կառուցվել է 7-րդ դարի առաջին կեսին կամ 8-րդ դարում՝ իշխան ՄԺեհ Գնունու (637 թ.) կամ Արճեշի հոգևոր առաջնորդ Եղիա Արճեշցու (703-717 թթ.) կողմից, և եղել սույն շրջանի 3 ամենանշանավոր վանքերից մեկը:

1393 թ. եկեղեցու վանական դպրոցն ունեցել է 60 աշակերտ, իսկ 1409-1414 թթ.՝ վանահայր Կարապետի օրոք, վերականգնվել է: Վանքի գմբեթը մասամբ փլվել է 19-րդ դարի առաջին կեսին, սակայն՝ վերստին կառուցվել: Աղբյուրը նաեւ հայտնում է, որ վանքը 1896 և 1915 թթ. հարձակման է ենթարկվել, ամենայն հավանականությամբ՝ բրդերի կամ թուրքերի կողմից:


Արծվաբեր վանքը թուրքերի կողմից զավթվել է Առաջին աշխարհամարտից և Հայոց ցեղասպանությունից անմիջապես հետո: Վանքի պարիսպներն ու խաչքարերը և կից կառույցներն ամբողջովին ավիրվել են, և փաստորեն մնացած ավերակները եւս լիովին անհետանալու վտանգի տակ են:

Թուրքիայում եւս 2 հայկական եկեղեցի է նախատեսվում վերանորոգել



Թուրքիայի Գյումուշհանեի Սուլեյմանիյե թաղամասում կիսաքանդ վիճակում գտնվող 2 հայկական եկեղեցիները առաջիկա ամիսներին նախատեսվում են վերանորոգել: Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Ստամբուլի տեխնիկական համալսարանի մի խումբ գիտաշխատողներ Գյումուշհանեի նահանգապետի կողմից հրավիրվել են ուսումնասիրելու Գյումուշհանեի Սուլեյմանիյե թաղամասում գտնվող 2 հայկական եկեղեցիները: Գյումուշհանեի նահանգապետարանը այդ եկեղեցիների վերանորոգման ծրագիր է պատրաստել՝ ցանկանալով նահանգում ավելացնել տուրիզմի պոտենցիալը: Եկեղեցիներից մեկը շրջանում հայտնի Սուրբ Աստվածածինն է, որից էլ սկսվել են աշխատանքները: Նախնական պեղումների ժամանակ հայտնաբերվել են հայերեն գրություններով քարեր եւ սրբապատկերներ:

Մեւ կատու, սեւ բախտ. Ի՞նչ վիճակում է այսօր գտնվում Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցին



Վերջերս մամուլում հրապարակումներ եղան այն մասին, թե մի խումբ հավատացյալներ կարողացել են մուտք գործել Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս և մոմ վառել ու աղոթք անել այնտեղ: Դիարբեքիրում Akunq.net-ի հատուկ թղթակից Կարոտ Սասունյանից տեղեկացանք, որ եկեղեցու մուտքը պաշտոնապես դեռ փակ է, և այդ մարդիկ կարողացել էին եկեղեցի մտնել մասնավոր կապերի միջոցով: Այնուամենայնիվ, այդ դեպքն առիթ ծառայեց, որ Կարոտ

Սասունյանը զարտուղի ճանապարհներով և գրեթե կյանքը վտանգի ենթարկելով՝ մտնի Մերձավոր Արևելքի ամենամեծ հայկական եկեղեցին և լուսանկարներ անի այնտեղ, որպեսզի ամբողջ հայությունը տեղեկանա սույն եկեղեցու ներկայիս վիճակի մասին: Ստորև թուրքերենից թարգմանաբար հրապարակում ենք Կարոտ Սասունյանի հոդվածը և Սուրբ Կիրակոսում նրա արած լուսանկարները: Կարոտ Սասունյան

Խնկի բույրն առաջին անգամ հենց այս եկեղեցում էի զգացել... Այնքան էր դուրս եկել, որ այդ կիսավեր եկեղեցին պահպանելու նպատակով կից կառույցում ապրող ընտանիքի անդամներից մեկն ինձ մի քանի կտոր խունկ էր տվել՝ թղթի մեջ փաթաթելով... Այդ կիսաքանդ եկեղեցին Սուրբ Կիրակոսն էր: Ես Սասունի գյուղերից մեկում էի ապրում: Երբեմն, գործի բերումով, Դիարբեքիր էի գալիս: Գալուն պես այցելում էի այդ եկեղեցին, որի տանիքը դեռ լիովին չէր փլվել: Ամեն այցիս հետ նկատում էի, որ եկեղեցու տանիքից երկու կամ երեք քար էլ էր ընկել: Ամեն անգամ մտածում էի՝ մի՞թե մի ճար չկա: Չկա~ր:

Դիտավորյալ էին թողել, որ այն ավերվի: Դիտմամբ էին պատժում նրան: Եվ եկեղեցին քանդվում էր, ոչնչանում՝ ցավ քաշելով ու ցավ պատճառելով: Գրքերում էինք ընթերցել, որ Սուրբ Կիրակոսը Մերձավոր Արևելքի ամենամեծ հայկական եկեղեցին է եղել, որ բաղկացած է եղել յոթ խորաններից, և որ երբ նրա զանգը հնչում էր, ձայնը մինչև Սասուն էր հասնում: Գրքերից էինք իմացել, որ այս եկեղեցու զանգակատունը մզկիթի մինարեից բարձր էր եղել, որի պատճառով այն քանդել էին տվել: Թնդանոթի ռումբերով անգամ չէին կարողացել զանգակատունը հողին հավասարեցնել: Դրա համար էլ Սիրիա «աքտրված» մի հայ ճարտարապետի էին այդ գործը հանձնարարել:

Եկեղեցու բակում ապրող չգիտեմ քանի տարեկան Լույսեն քույրիկի՝ չգիտեմ որ համարի ակնոցները լվանում էի՝ բակում գտնվող փոքրիկ սև բազալտի քարից պատրաստված և երիցուկի նմանվող ջրավազանի անիվի միջոցով ջուր հանելով: Ամեն անգամ աչքերս համբուրելով՝ օրհնում էր ինձ: Սպասված օրը եկավ... Աստված հոգիդ լուսավորի, Լույսե~ն քույրիկ (գրված է հայերենով-Ակունքի խմբ): Այլևս այն ջրավազանի անիվը չկա, որ ակնոցներդ լվանք: Գողացել են... Գիտե՞ս՝ ջուրը չեն կարողացել գողանալ: Թերևս եթե կարողանային, ջուրն էլ կգողանային՝ ճիշտ այնպես, ինչպես մեր հայրենիքը գողացան... Մեր հայրենիքը կարողացան գողանալ, բայց հողը՝ ոչ...

Մի օր, երբ խիստ հորդառատ անձրև էր տեղում, նորից Դիարբեքիր էի գնացել: Մտքումս ասում էի՝ եկեղեցու տանիքի մնացյալ հատվածը չի դիմանա այս անձրևին: Այդպես էլ եղավ: Անձրևը դադարել էր, իսկ եկեղեցու տանիքը՝ փլվել: Այլևս սկսվել էր անխուսափելի վերջը: Պատերն էլ էին փլվելու, խորաններն էլ... Այսինքն՝ վախճանվելու էր մեր եկեղեցին: Բակը լցվել էր տանիքի քարերով ու փոշով: «Ի՞նչ է լինելու այս եկեղեցու վիճակը», - հարցնում էի ես: Անդո հորեղբայրը, աչքերը լցնելով, պատասխանում էր ինձ, դիարբեքիրցի վառարանագործ Անդո հորեղբայրը, ով հայտնի էր նաև Անդրանիկ Չոր անունով:


Նա էլ չէր լքել Սուրբ Կիրակոսը: Հիվանդացավ, ստիպված եղավ հեռանալ Սուրբ Կիրակոսից, ակամա հյուրընկալվեց Ստամբուլի Սուրբ Փրկիչ հիվանդանոցում: Գնաց՝

չկարողանալով խնկի բույրը նորից շնչել Սուրբ Կիրակոսում... Աստված հոգին լուսավորի...

Բանակում ինձ թագավորի պես էր դիմավորել սասունցի Դանիել Քոյունջուն: Երեք ամիս անընդմեջ ինձ պահել-պահպանել էր: Ծնվել ու մեծացել էր Դիարբեքիրում: Նա ևս Սուրբ Կիրակոսում շնչել էր խունկի բույրը: Հանձն առավ եկեղեցին վերջնական ավիրումից փրկելու գործը: Նրա դասընկերները բարձր պաշտոններ ունեին: Նաև վերջինների աջակցությամբ Դանիելը գլխավորեց եկեղեցու հիմնադրամի կազմավորման գործը: Եվ՝ երջանիկ ավարտ. եկեղեցին վերականգնվեց: Քանդված զանգակատան տեղում նույնը կառուցեցին՝ նախկինի բարձրությամբ: Թեկուզ և հատուկ թույլտվությամբ, այնուամենայնիվ 40 տարի անց առաջին պատարագը մատուցվեց: Աշխարհի բոլոր ծայրերից հայեր էին եկել: Այդ մեծ եկեղեցու ներսն այնքան էր լցված մարդկանցով, որ մեծ մասը բակում էր կանգնել: Այստեղ անգամ կանգնելու տեղ չէր մնացել: Դանիելը շատ երջանիկ էր: Տարիներ անց վերստին խունկի բույրն էր շնչել և այլոց շնչել տվել Սուրբ Կիրակոսում: Սև լուր հասավ. Դանիելի սիրտը կանգ էր առել. չկարողացավ Սուրբ Չատիկը տեսնել, Սուրբ Հարության տոնի..



Թուրքիայում Ցեղասպանությունից փրկված մի խումբ հայեր հոգեւորականի հետ այցելել են իրենց պապերի գերեզմանը



Թուրքիայի Սվազ նահանգի հայտնի Չառա բնակավայրի հայկական գերեզմանատուն այցելած մի խումբ հայեր հարգանքի տուրք են մատուցել իրենց պապերի հիշատակին: Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Չառայի հայկական գերեզմանատունը եղել է ոչնչացման

եզրին, երբ արմատներով Չառայից սերված հայ գործարար Ֆեթիի Արասը նախաձեռնել է գերեզմանատան վերակազմումը:

Այնուհետ գերեզմանատան խնամքն ու պահպանությունն ստանձնել է Չառայի քաղաքապատերաճը:

Չառայի հայկական գերեզմանատուն այցելած հայկական խմբին իր աշխատասենյակում ընդունել է Չառայի քաղաքապետ Սայրթ Ահմեդ Թալան:

Վանում առաջարկել են եւս մեկ հայկական եկեղեցի վերականգնել



Թուրքիայում խորհրդակցական ժողով է տեղի ունեցել՝ Վանի ամրոցում և հին Վան քաղաքում իրականացվող պեղումների վերաբերյալ: Այդ մասին հաղորդում է Akunq.net-ը:

Աղբյուրի համաձայն, ժողովի ժամանակ ներկայացված զեկուցումներում շեշտվել է այս աշխատանքների կարևորությունը՝ Թուրքիայում զրոսաշրջությունը զարգացնելու տեսանկյունից:

«Արեւելյան Անատոլիայի զարգացման գործակալության» շենքում կայացած ժողովին ելույթ ունեցած գործակալության գլխավոր քարտուղար Հայիլ Իբրահիմ Գյուրայը նշել է. «Անընդհատ ասում ենք, թե «Վանը քաղաքակրթությունների քաղաք է», բայց միայն ասելը բավարար չէ: Պետք է այդ քաղաքակրթությունները մեջտեղ հանվեն: Մեր նպատակն է հին Վան քաղաքի բացահայտումը: Մեր կազմակերպությունն աջակցում է այս գործին: Պեղումները կատարող խումբը լավն է: Շարունակում ենք համակարգված կերպով աշխատել նրանց հետ: Այլևս կոնկրետ քայլեր կատարելու ժամանակն է: Վանում շատ լուրջ գանձարան ունենք»:

Այնուհետև ելույթ է ունեցել դոկտոր Էրբան Քոնյարը, որը լուսանկարներ ցույց տալով՝ ներկայացրել է 2002 թ. մինչ օրս իրականացվող պեղումների ընթացքը: Նա մասնավորապես հայտնել է, որ աշխատանքները պետք է փուլերով կատարվեն, և որ թուրքական 5 համալսարաններից 12 գիտնականներ են մասնակցում դրանց: Նա նաև նշել է, որ աշխատանքների ընթացքում օգտվել են անգլիական և ամերիկյան արխիվներից ու Ստամբուլի համալսարանի գրադարանից, ինչպես նաև՝ 5-րդ դարի հայկական աղբյուրներից: Էրբան Քոնյարը նաև հայտնել է, որ ուսումնասիրվող տարածքում առկա են մի շարք եկեղեցիներ և շեշտել. «7 եկեղեցի կա այնտեղ: Դրանցից մեկն անպայման պետք է վերականգնենք: Պետք է շեշտ դրվի նաև բազմամշակութայնության վրա: Միգրացի վերականգնվելիք եկեղեցում նաև կրոնական արարողություններ կատարվեն: Դա կարող է անել թանգարանի տնօրինությունը»:

Թուրքիայում ձերբակալվել է համշենահայ մտավորականն ու նրա կինը



Թուրքիայի Արդվին նահանգում ձերբակալվել է համշենահայ մտավորական, «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցության Հոփայի շրջանի համանախագահ Ջեմիլ Աքսուն:

Թուրքական Demokrathaber կայքի փոխանցմամբ՝ ոստիկանություն հրավիրված Ջեմիլ Աքսունին հարցաքննությունից հետո սոցցանցերում գրառում կատարելու համար ձերբակալել են:

Նրան հայտնել են, որ նա մեղադրվում է սոցցանցերով հանցանքը կամ հանցագործին գովելու մեջ:

Նշենք, որ Ջեմիլ Աքսուն 2014 թվականից հրատարակվող համշենական առաջին ամսագրի՝ «Գոր»-ի խմբագրակազմի անդամ է:

Աքսուն իր քաղաքական հայացքների պատճառով 8 տարի անցկացրել է թուրքական բանտերում:


Թուրքիայում ոստիկանությունը խուզարկել է համշենահայ մտավորական Ջեմիլ Աքսունի տունը եւ ձերբակալել նրա կնոջը:

Թուրքական Gazeteduvar կայքի փոխանցմամբ՝ Ջեմիլ Աքսուն հայտնել է, որ կնոջը ձերբակալել են սոցցանցերում գրառման համար: «Թուրքիային բնորոշ երեւոյթ...: Ֆեյսբուքում գրառում կատարելու համար առավոտյան մեր տուն ներխուժեցին, խուզարկեցին, Նուրջանին ձերբակալեցին, իմ համակարգիչն ու մի քանի գրքեր տարան հետները», -գրել է Ջեմիլ Աքսուն:

Նշենք, որ Ջեմիլ Աքսուն 2014 թվականից հրատարակվող համշենական առաջին ամսագրի՝ «Գոր»-ի խմբագրակազմի անդամ է:

Աքսուն իր քաղաքական հայացքների պատճառով 8 տարի անցկացրել է թուրքական բանտերում:

Ստամբուլի նահանգապետարանում առանց արք, Բեքյանի պատրիարքի ընտրություններն են քննարկել



Ստամբուլում այն պահին, երբ Պոլսո հայոց պատրիարքի տեղապահ արք. Գարեգին Բեքյանը գտնվել է Գերմանիայում, պատրիարքարանի մի շարք հոգեւորականներ հանդիպել են Ստամբուլի նահանգապետի հետ:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, հանդիպումից հետո արված հայտարարության մեջ նշվել է, թե պատրիարքի ընտրությունների նկատմամբ պետության անհանգստությունը փարատող առաջարկություններ են արվել:

«Ակոս»-ը ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ պատրիարքի ընտրության դերակատարները հանդիպում են նահանգապետի հետ հենց այն ժամանակ, երբ պատրիարքի տեղապահ արք. Բեքյանը գտնվում է Գերմանիայում:

Նշվում է, որ Ստամբուլի նահանգապետի հետ հանդիպմանը մասնակցել են նախկին փոխպատրիարք, արք. Արամ Աթեշյանը, Պատրիարքարանի կրոնական խորհրդի առաջնորդ, եպիսկոպոս Սահակ Մաշայանը, Սուրբ Փրկիչ հիվանդանոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ Պետրոս Ծիրինօղլուն եւ պատրիարքի ընտրության նախաձեռնող խմբի նախագահ Սարգիս Քուլեգեչը:


Սահակ Մաշայանը «Ակոս»-ի հետ զրույցում ասել է, թե արք. Բեքյանի վերադառնալուց հետո կքննարկի իրավիճակը, որից հետո հանդես կգա հայտարարությամբ:

Ավելի վաղ Պետրոս Ծիրինօղլուն հայտարարել էր, թե թուրքական իշխանությունների համար արք. Բեքյանը անցանկալի թեկնածու է, որից հետո Բեքյանը պատասխանել էր, թե իշխանությունները հայ խոսնակի կարիք չունեն:

«Ակոս»-ն այս հանդիպումից հետո հայ մասնակիցների կողմից պետության միջամտությունը ընտրությունների գործընթացին նորմալ ընդունելը տարիօրինակ է համարել:

Սփյուռք

Վրաստանի հայկական դպրոցները 4 տարի ընդմիջումից հետո ստացել են հայոց լեզվի եւ գրականության նոր դասագրքեր



Վրաստանի հայկական դպրոցները 4 տարի ընդմիջումից հետո ստացան հայոց լեզվի եւ գրականության նոր դասագրքեր, հաղորդում է Jnews.ge-ն:

Վրաստանի Կրթության եւ գիտության նախարարության եւ Հայաստանի Սփյուռքի նախարարության բանակցությունների արդյունքում Վրաստանի հայկական դպրոցների աշակերտները այսուհետ կսովորեն նոր դասագրքերով: Նոր ուսումնական տարվա սկզբին Վրաստանի ԿԳ նախարարությունը Հայաստանից ստացել է

առաջինից մինչև իններորդ դասարանների աշակերտների համար: Ընդհանուր առմամբ Հայաստանի Սփյուռքի նախարարությունը 19 017 կտոր գիրք է ուղարկել:

Ինչպես տեղեկացանք Ախալքալաքի Կրթական ռեսուրս կենտրոնից, շրջանի 65 դպրոցներին անվճար բաժանվել է դպրոցական դասագրքեր, այդ թվում եւ նոր հայկական գրքեր: Ախալքալաքը ստացել է հայոց լեզվի եւ գրականության նոր 8 738 կտոր գիրք:

«Ուսումնական տարվա սկզբում ԿԳ նախարարությունից ստացանք նամակ, որ հայոց լեզվի եւ գրականության դասագրքեր են ստացել Հայաստանից: Հիմա արդեն դասագրքերը բաժանվել է աշակերտներին, բոլոր դպրոցներին անխտիր, ըստ անհրաժեշտ քանակի բաժանվել է: Տեղեկանում էինք դպրոցներից, որ գրքերը վատ վիճակում են եւ անհրաժեշտ են նոր դասագրքեր, հետեւաբար այդ պրոբլեմային հարցը նույնպես լուծվեց», – ասաց Ախալքալաքի Կրթական ռեսուրս կենտրոնի ղեկավար Թերեզա Չիվյանը:


2013 թվականից այս կողմ Ջավախքի հայկական դպրոցները հայոց լեզվի եւ գրականության դասագրքերով չէին համարվել: Վերջին անգամ Վրաստանի հայկական դպրոցները հայոց լեզվի եւ գրականության դասագրքեր ստացել էին 2015 թվականի դեկտեմբերին, որոնք, ինչպես ավելի ուշ պարզվեց, չէր համապատասխանում ուսումնական ծրագրին, այդ իսկ պատճառով էլ չբաժանվեց աշակերտներին: Այդ ժամանակ Հայաստանի Սփյուռքի նախարարությունը 5 265 դասագիրք էր ուղարկել Վրաստանի հայկական դպրոցների աշակերտներին:

Հավելենք, որ 2009-2013 թթ. ՀՀ ԿԳ նախարարության կողմից Վրաստանի հայկական դպրոցներին տրամադրվել է 61 522 կտոր գրականություն: Համաձայն հետեւյալ բախշման՝ 2009–2010 թթ. ուսումնական տարում 32 060 կտոր, 2011 թվականին՝ 7 138, 2012 թվականին՝ 7 569 եւ 2013 թվականին՝ 14 755 կտոր ուսումնական գրականություն:

Ախալքալաքի շրջանում կա 65 դպրոց, որից 55-ը հայկական է, 7-ը՝ վրացական, 1-ը՝ ռուսական եւ 2-ը խառը՝ հայ-վրացական ուսուցմամբ: Այդ դպրոցներում ընդհանուր սովորում է 7176 աշակերտ:

Մինչև 2017-2018 ուսումնական տարին Վրաստանի հայկական դպրոցների աշակերտները սովորում էին ահա այսպիսի մաշվածությամբ դասագրքերով:

Քիրքուքում ապրում է 30 հայ ընտանիք, նրանց որեւէ վտանգ չի սպառնում. տեր Արթուն քահանա Խալաթյան



Իրաքի Քիրքուք քաղաքում ապրող հայերին այս պահին որեւէ վտանգ չի սպառնում: Այս մասին այսօր՝ հոկտեմբերի 14-ին, NEWS.am-ի հետ զրույցում ասաց Էրբիլի հոգևոր հովիվ տեր Արթուն քահանա Խալաթյանը: Նա նշեց, որ Քիրքուք քաղաքն այս պահին շրջապատված է իրաքյան

գորքերով, սակայն, իրավիճակը հանգիստ է, քաղաքը գրավելու գործողությունների մասին լուրերը չեն համապատասխանում իրականությանը:

Նրա խոսքով, Քիրքուքում ապրում է 30 հայ ընտանիք, այս պահին նրանք բոլորը քաղաքում են, այնտեղ կա նաեւ հայ առաքելական եկեղեցի՝ Սուրբ աստվածամայր:

Ավելի վաղ լրատվամիջոցները հայտնել էին, որ Իրաքի գորքերը Քիրքուքի գրավման գործողություն են սկսել: Ընդ որում, քրդական Rudaw հեռուստա-ընկերությունը հաղորդում է, որ Իրաքի միացյալ հրամանատարությունը հերքել է Քիրքուքի հարավում գործողություն սկսելու լուրերը, նշելով, որ Հավիջ քաղաքի ազատագրման համար իրականացվող օպերացիայի շրջանակներում գործողություններ են իրականացվում տարածաշրջանը ԻՊԳ զինյալներից ազատագրելու ուղղությամբ:

Սակայն փեշմարգայի հրամանատարությունը հայտարարել է, որ անցած գիշեր Իրաքի զինյալները եւ ռազմական կազմավորումները Քիրքուքի հարավից սկսել են առաջ շարժվել հարձակման նպատակով: Քիրքուք են ուղարկվել փեշմարգայի հազարավոր զինյալներ:

Պետրոս Դուրյանի գերեզմանաքարի վիճելի վերանորոգումը Ստամբուլում մեծ աղմուկ է բարձրացրել



Հայ գրականության դեմքերից Պետրոս Դուրյանի գերեզմանաքարը վերանորոգելուց հետո պատվանդանի մոտ ավելացվել է մարմարե գիրք:

Թուրքական Kulturservis կայքում լրագրող Սեւան Դեդիրմենջյանն անդրադարձել է Պետրոս Դուրյանի գերեզմանաքարի վերանորոգման խնդրին՝ քննադատելով մարմարե գրքի տեղադրումը, որն ըստ հեղինակի հետին պլան է մղում բուն գերեզմանը եւ աղավաղում 150-ամյա գերեզմանաքարի տեսքը:

Ստամբուլի հայ ճարտարապետների միության նախագահ Գեւորգ Օզքարազյոզը նշել է, թե գերեզմանաքարը վերանորոգվել է Դավիթ Այնալի կողմից, իսկ մարմարե գիրքը տեղադրվել է առանց որեւէ մեկի հետ խորհրդակցելու: Պոլսո հայոց պատրիարքարանի կրոնական ժողովի ատենապետ, եպիսկոպոս Սահակ Մաշալյանը եւս հայտարարել է, թե մարմարե քանդակի տեղադրման մասին պատրիարքարանին որեւէ մեկը տեղյակ չի պահել:

Հայտնի է, որ Պետրոս Դուրյանի գերեզմանաքարի վերանորոգումն իրականացվել է պոլսահայ Հրաչ Անուշավան Քըրմըզյանի կողմից, իսկ վերանորոգման

նախաձեռնությունը պատկանել է Ուսքյուդարի Սուրբ Խաչ եկեղեցու հիմնադրամի անդամներին:

Պետրոս Դուրյանի գերեզմանաքարի դիմաց դրված մարմարե գիրքը հանելու պահանջով ստորագրահավաք է սկսվել ստամբուլահայերի շրջանում:

Նշենք, որ մարմարե գրքի վրա տպված է Պետրոս Դուրյանի «Իմ մահը» բանաստեղծությունը հայերենով եւ թուրքերենով:

Սիսի կաթողիկոսարանի վերադարձի դատի հարցով ՄԻԵԴ-ի մոտեցումը անարդար ենք գտնում. Արամ Ա



Բրյուսելում՝ Եվրոպայի խորհրդարանի սրահներից մեկում, Հայ դատի եվրոպական գրասենյակի կողմից կազմակերպված համագումարի բացման նիստին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն, իր պատգամը հղելով ներկաներին, խիստ քննադատել է ՄԻԵԴ-ի հապճեպ եւ անարդար մոտեցումը Սիսի կաթողիկոսարանի վերադարձի գործով:

Նորին Սրբությունը իր ելույթում շեշտել է, որ չնայած Թուրքիայի գործողությանն ու մի շարք երկրների աշխարհաքաղաքական շահերին, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը շարունակվում է: «Իսկ ճանաչումը ենթադրում է նաեւ հատուցում: Ավելին, Թուրքիան լինելով Օսմանյան Կայսրության շարունակողը, չի կարող ուրանալ Հայոց Ցեղասպանությունը եւ անտեսել հատուցումը», - նշեց նա:

Նա նաեւ ընդհանուր գծերով ներկայացրեց Թուրքիայի դեմ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացրած հայցը: Նա հայտնեց, որ մի քանի տարի առաջ նամակ է հղել նախագահ Էրդողանին՝ պահանջելով Սիսի Կաթողիկոսարանի վերադարձը իր իրավատիրոջ՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության իրավասության ներքո: Այն բանից հետո, երբ նամակը անպատասխան է մնացել, Կաթողիկոսարանը Թուրքիայի Սահմանադրական դատարան է դիմել: Իսկ վերջինս, անհիմն իրավական հիմնավորումներ ներկայացնելով, մերժել է քննել դատը՝ ընդառաջելով Թուրքիայի Արդարադատության նախարարության թելադրանքին: Ուստի, ստիպված են եղել դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Մեծ էր մեր զարմանքը, երբ Եվրոպական դատարանը մերժեց ընդունել մեր դատի քննությունը՝ հակառակ իրավական հանձնախմբի կողմից դիմումներին: «Ինչպե՞ս եղավ, որ միջազգային իրավագետների եւ եվրոպական դատարանի մասնագետների կողմից պատրաստված 900 էջերից բաղկացած եւ պատմաիրավական լուրջ հիմնավորումներով թղթածրարը մերժվեց անհատ դատավորի կողմից:

Միջազգային դատավարության օրենքների համաձայն, դատավորը պարտավոր է լսել հայցը: Այդ ինչպե՞ս է եվրոպական դատարանը թելադրում հայցը ուղարկել

Թուրքիայի դատարաններ՝ քաջ գիտակցելով, որ հայրուրավոր դատավորներ եւ փաստաբաններ՝ այդ թվում՝ սահմանադրական դատարանի եւ Սիսի Դատի իրավական հանձնախմբին պատկանող, բանտարկված են: Մարդու իրավունքների ջատագով Եվրոպական դատարանը ինչու՞ է իրեն հեռացնում արդարությունից եւ ճշմարտությունից՝ մերժելով նույնիսկ մեր դատի ստանձնումը: Սա ընդվզում է առաջացնում հայ ժողովրդի եւ բոլոր նրանց մոտ, ովքեր հավատում եւ պայքարում են արդարության եւ մարդկանց իրավունքների համար», - իր վրդովմունքն հայտնեց հայրապետը:

Շարունակելով իր խիստ քննադատությունը, Արամ Ա. Կաթողիկոսը նշեց. «Եվրոպան մարդկային իրավունքների ջերմ հավատացող համայնք է. հետեւաբար, արդարությունը պետք է վեր համարի բոլոր տեսակի աշխարհաքաղաքական նկատառումներից»: Նորին Սրբությունը կոչ է արել վերանայել դատը, ապա շեշտել. «Մեր ժողովուրդը պիտի շարունակի իր պայքարը խնդրի արդարության համար եւ մենք պիտի հասնենք Սիսի Կաթողիկոսարանի արդար դատին թե՛ թուրքական դատարաններում, թե՛ Եվրոպական դատարանում»:

Երեւանում իրանահայը իրանական ապրանքները ԵՏՄ արտահանելու համար մեծածախ բազա կբացի



Իրանից գործարար Լեւոն Ահարոնյանը պատրաստվում է իրանական ապրանքները ԵՏՄ արտահանելու համար Երեւանում մեծածախ բազա բացել: Մի քանի հազար քառակուսի մետր տարածքով կենտրոնի համար Երեւանի հարավային շրջաններում են պատրաստվում տարածք վարձակալել:

«ԵՏՄ-ից գնորդներին կարող են ամենատարբեր ապրանքները հետաքրքրել: Դրանք մրգեր են, բանջարեղեն, պահածոներ, նավթաքիմիական ապրանքներ եւ շատ այլ բաներ», - ասել է նա:

Կենտրոնը կես տարուց կսկսի գործել, հավելել է նա:

Շառլ Ազնավուրը անհարմար հարց տվեց Իսրայելի նախագահին

Այսօր Երուսաղեմում Իսրայելի նախագահի նստավայրում կայացավ Շառլ Ազնավուրի եւ նրան ուղեկցող ընտանիքի անդամների հանդիպումը նախագահ Ռոուվեն Ռիվլինի ու Ռաուլ Վալենբերգի անվան միջազգային հիմնադրամի ղեկավարության հետ: Այդ մասին հայտնում է «Ազատություն» ռադիոկայանը:

Հիմնադրամի նախագահ Բարուխ Տենենբաումը շվեդ դիվանագետ Ռաուլ Վալենբերգի անվան մեդալով պարգևատրեց ֆրանսահայ աշխարհառեչակ շանտոնիեին,

նաեւ նրա քրոջ՝ Աիդային, ում փոխարեն պարգևւել ստացավ Ազնավուրի որդին՝ Նիկողայսը:



Հիմնադրամի ներկայացուցիչները բացեցին այս միջոցառումը՝ ներկայացնելով հրեա պրոֆեսոր, ցեղասպանագետ, հայ ժողովրդի բարեկամ Յաիր Աուրոնի մեկամյա աշխատանքը, որի ընթացքում նա գրի էր առել Ազնավուրի ընտանիքի պատմությունը, Շառլ Ազնավուրի ծնողների՝ Միշայի ու Քնարի, ինչպես նաեւ հենց իր ու քրոջ սիրանքները Երկրորդ աշխարհամարտի տարիներին: Պատերազմի տարիներին Ազնավուրյանները Փարիզում աջակցում էին հայտնի պարտիզան, հետմահու Ֆրանսիայի Ազգային հերոս հռչակված Միսաք Մանուշյանին ու նրա խմբին եւ սպաստան էին տրամադրել թե՛ հայերին եւ թե՛ հրեաներին՝ վտանգելով սեփական կյանքը:

Ազնավուրը իր խորին երախտագիտությունը հայտնեց թե՛ Վալենթերգի անվան հիմնադրամին՝ պարգևի համար, թե՛ Իսրայելի նախագահին՝ ընդունելության համար: Աշխարհահռչակ շանտնիեն նաեւ հարցրեց, թե ե՞րբ է ի վերջո Իսրայելը ճանաչելու Հայոց ցեղասպանությունը:

«Ես ոչ գաղտնի հարց եմ Ձեզ ուղղում եւ չեմ սպասում պատասխանի, այնուամենայնիվ կարելու է այն բարձրացնել: Ինչո՞ւ Դուք չեք ճանաչում Հայոց ցեղասպանությունն այն դեպքում, երբ ինքներդ եք տառապել նացիստական ռեժիմից», - հարցրեց Ազնավուրը:

Ի պատասխան՝ Ռիվլինը ասաց, որ դա քաղաքական հարց է, եւ իր՝ Քնեսեթի պատգամավոր ու այնուհետեւ նաեւ նախագահ աշխատած ժամանակաշրջանում յուրաքանչյուր տարի հարցը Իսրայելի խորհրդարանում բարձրացրել են, հիշատակել են Հայոց ցեղասպանության օրը, եւ ինքն էլ 2015 թվականին ՄԱԿ-ի ամբիոնից բավական հստակ խոսել է 1915 թվականին տեղի ունեցած Հայոց ցեղասպանության մասին:

«Մենք Քնեսեթում ներկա ենք եղել այդ սարսափելի իրադարձությունների հիշատակի արարողությանը: Ցավոք, Իսրայելի կառավարությունը չկարողացավ տեղի ունեցածը ճանաչել որպես Ցեղասպանություն, եւ միակ հարցն այն է, թե ինչպես է այն ձեւակերպվում: Եվ ես, որպես Իսրայելի նախագահ, պարտավոր եմ հարգել Իսրայելի կառավարության որոշումները: Կոտորած, թե ցեղասպանություն՝ սարսափելի, սարսափելի բան է տեղի ունեցել Հայ ժողովրդի հետ 1915 թվականին», - մասնավորապես, ասաց Իսրայելի նախագահը:

Վաղը կեսօրին Նեւե Շալոմ գյուղում, որը բնակեցված է հրեաներով եւ արաբներով, Ազնավուրը ձիթենի է տնկելու ի պատիվ հրեաների, քրիստոնյաների ու մահմեդականների կյանքը փրկած հերոսների:

Միջազգային

«Օգնությունը ճանապարհին է». ԱՄՆ-ի փոխնախագահ Փենսը խոսել է Հայկական լեռնաշխարհի եւ քրիստոնեության մասին

Այսօր ես եկել եմ ասելու ձեզ՝ օգնությունը ճանապարհին է: Այս մասին հայտարարել է ԱՄՆ փոխնախագահ Մայք Փենսն «Ի պաշտպանություն քրիստոնյաների» գազաթաժողովի իր հայտարարության ընթացքում, հավելելով, որ Մերձավոր Արեւելքի քրիստոնյա համայնքների նկատմամբ Վաշինգտոնի քաղաքականությունն արմատական փոփոխության է ենթարկվել:

ՄԱԿ-ը Փենսի խոսքով, լիարժեք չի կատարում իր առաքելությունը: Արդյունքում տարածաշրջանում փոքրամասնություն կազմող քրիստոնյա համայնքներին ամերիկյան օգնությունը գրեթե չի հասնում. «Մերձավոր Արեւելքի մեր քրիստոնյա բարեկամները չպետք է ապավինեն միջազգային կազմակերպություններին: Ամերիկյան կարող է նրանց ուղղակի օգնել: Ուստի պատիվ ունեմ հայտարարելու, որ նախագահ Թրամփը հրահանգել է Պետքարտուղարությանը դադարեցնել ՄԱԿ-ի անարդյունավետ օգնության ֆինանսավորումը: Այսուհետ Ամերիկյան ուղղակի օժանդակություն կտրամադրի այդ համայնքներին»:

Թրամփի վարչակազմի որոշումը լայն աջակցություն է գտել ոչ միայն գազաթաժողովին ներկա Մերձավոր Արեւելքի քրիստոնյա համայնքների ներկայացուցիչների, այլեւ ամերիկյան օրենսդիրներից շատերի կողմից: Կոնգրեսական Քրիս Սմիթի խոսքով դա թույլ կտա քրիստոնյաներին իրական օգնություն ստանալ. «Քրիստոնյաները չէին այցելում ՄԱԿ-ի օգնության կետերը, քանի որ քրիստոնյա կանանց նկատմամբ կարող էին բռնություն կիրառել, իսկ տղամարդկանց ծեծի ենթարկել կամ սպանել: Նման կետերից շատերում նրանց մահացու վտանգ էր սպառնում»: Իր ելույթում փոխնախագահ Փենսը հիշեցնում է, քրիստոնեությունը տարածվել է հենց Մերձավոր Արեւելքից. «Սիրիայի սարերում, Լիբանանի հովիտներում, Նիւվեի հարթավայրերում, Հայկական լեռնաշխարհում, Տիգրիսի եւ Եփրատի ափերից մինչեւ Նեղոսի դելտա մեր հավատքի հայրերն ու մայրերը Քրիստոնյա հավատքի սերմերն են տնկել»:

Իրաքից գազաթաժողովին ժամանած Մայք Օլգան ընդգծում է՝ Հայկական, Սիրիական եւ Իսալոյան եկեղեցիները քրիստոնեությունը ստացել են դեռեւս առաջին դարում առաքյալներից, հետեւաբար եւ կոչվում են՝ Առաքելական.

«Մայրս հայ է եւ մինչ օրս աղոթում է միայն հայերեն, նշում Սուրբ Ծնունդը Հայ առաքելական եկեղեցու հետ, քանի որ կապված է իր արմատներին: Դա պետք է հարգել եւ թույլ տալ մարդկանց պահպանել կապն արմատների հետ»:

Գազաթաժողովի կազմակերպիչներից՝ Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչ Արամ Համբարյանը նշել է, որ Մերձավոր Արեւելքում քրիստոնյաների պահպանության եւ այլ հարցերն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե քաղաքական այլ՝ բարոյական տեսանկյունից. «Կարիք չկա ընտրություն կատարելու հզոր եւ արդար լինելու միջեւ,

նման ընտրություն գոյություն չունի, մենք կարող ենք եւ պետք է լինենք հզոր եւ արդար»:

Իր ելույթում Մայք Փենսը ընդգծում է՝ ամերիկյան աշակցությունը վճռական է Մերձավոր Արեւելքի քրիստոնյաների պահպանման համար:

«Միացյալ Նահանգները միշտ կսատարի նրանց, ովքեր տառապանքներ են կրում իրենց հավատքի համար: Մենք միշտ նրանց ի սատար ենք կանգնելու»:

Ինչպես է Թուրքիան ոչնչացրել իր պատմական արխիվներն ու փաստաթղթերը կամ ձերբագրավել դրանցից



Թուրքիան փորձում է ոչնչացրել իր պատմական արխիվներն ու փաստաթղթերը կամ ձերբագրավել դրանցից: Այս մասին իր հոդվածում գրել է «Կալիֆորնիա Կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանը:

Նրա հոդվածը ներկայացնում ենք ստորև:

«Մի քանի տասնամյակ շարունակ թուրքական կառավարությունը եւ նրա քարոզիչները հայտարարում են, որ պետական փաստաթղթերը, մասնավորապես Օսմանյան արխիվները, ամբողջովին բաց են եւ հասանելի ամբողջ աշխարհի ցանկացած հետազոտողի համար:

Սակայն թուրք պաշտոնյաներն ու նրանց կողմնակիցները լռում են այն մասին, որ Օսմանյան արխիվների բազմաթիվ փաստաթղթեր հեռացվել, ոչնչացվել, վաճառվել կամ մշակվել են: Բացի այդ, որոշ գաղտնի արխիվներ դեռ փակ են օտարների համար:

Անցյալ ամիս թրքուհի լրագրող Ուզայ Բուլուրը PhilosProject.org կայքում մի բացահայտող հոդված տեղադրեց՝ «Թուրքիան առանց գրաքննության. գրաքննության եւ արգելքների պատմություն» վերնագրով՝ մի քանի հարյուրամյակների անցյալ ունեցող թուրքական արխիվների եւ փաստաթղթերի կարգավիճակի վերաբերյալ: Բուլուրը ազատ է նման գաղտնիքներ բացահայտելու հարցում, քանի որ նա այլեւս չի ապրում Թուրքիայում եւ այժմ հաստատվել է Վաշինգտոնում:

Այսօր Թուրքիայում պետական պատվերով արգելափակված է Վիքիպեդիայի կայքը, քանի որ Վիքիպեդիան հրաժարվել է ջնջել այն հոդվածները, որոնք բացահայտում են, որ թուրքական իշխանությունները աշակցում են Իսլամական պետության ահաբեկիչներին: Բացի այդ, Թուրքիայի կողմից արգելափակվել են 127 հազար կայքեր եւ 95 հազար անհատական վեբ կայքեր, տեղեկացնում է լրագրող Բուլուրը:

Այսօրվա հազարավոր կայքերի արգելումը շարունակությունն է Օսմանյան սուլթան Բայազիդ II- ի 1485-ի հրամանագրի, որով մահապատժի էին դատապարտվում բոլոր նրանք, ովքեր գրքեր էին տպագրում թուրքերեն կամ արաբերեն լեզուներով: Այդ արգելքը մնաց ավելի քան երկու դար, հայտնում է Բուլուրը: «Այդ արգելքը պատմաբանների կողմից լայնորեն վկայակոչվում է որպես

իսլամի մտավոր եւ գիտական փլուզման հիմնական պատճառներից մեկը արդյունաբերական հեղափոխության արշալույսին»:

Թուրքիայի Հանրապետությունը 1923-ից ի վեր, իր հիմնադիր Զեմալ Աթաթուրքի օրոք, շարունակեց գրաքննության ավանդույթը՝ արգելելով «առնվազն 130 թերթ, ամսագիր եւ գիրք՝ ըստ Մուստաֆա Յիւմազի եւ Յասմին Դորենի «Գրաքննությունը հանրապետական ժամանակաշրջանում (1923-1973)» գրքի»: Բուլուրի տեղեկացմամբ, Թուրքիայի երկրորդ վարչապետ Ադնան Մենդերեքը, 1950-60-ական թվականներին արգելեց 161 հրատարակություն:

Վերադառնալով արխիվային գրաքննությանը, Բուլուրը մեջբերել է թուրք հրեա պատմաբան Ռիֆաթ Բալիին, որը «բացատրում է մշակված կամ ոչնչացված պետական արխիվների պատմությունը իր 2014 թ. գրքում՝ «Թալանի ոչնչացման պատմությունը. տպագրված կամ գրված բառեր, մեռած տառեր, արխիվները դեն են նետել (կամ վաճառել) որպես թափոններ» Ծատ կուսակցությունների, սենատի եւ մի քանի այլ կառավարական կամ ոչ կառավարական հաստատությունների արխիվներ կամ փակ են հանրային օգտագործման համար կամ այլեւս գոյություն չունեն»: Ըստ Բալիի՝ «Թուրքիայում կուսակցությունների արխիվները փակվել են 1980 թ. սեպտեմբերի 12-ի պետական հեղաշրջման ժամանակ եւ ուղարկվել SEKA (ցեյուլոգի եւ թղթի գործարաններ), որպես թղթի թափոն»:

Թուրքիայի Ժողովրդահանրապետական կուսակցության (CHP) արխիվն ամենակարեւորն է, քանի որ այն հանրապետության հիմնադրման տարիների կուսակցությունն է: Ինչպես Բալին է գրում. «Ոմանք ասում են, որ այն [արխիվը] այրվել է, իսկ ոմանք՝ որ այն դեն է նետվել սեպտեմբերի 12-ին: Մի քանիսն էլ պնդում են, որ դրանք դեն չեն նետվել, այլ այստեղ են: Այսպիսով, այսօր դա առեղծված է: Արխիվի մեծ մասը գոյություն չունի»:

Բացի այդ, Բալին տեղեկացրել է, որ «նախագահության, Ազգային հետախուզական կազմակերպության (MIT) եւ Ներքին գործերի նախարարության արխիվները փակ են»: Հետաքրքիր է, Բալին գրի է առել մի տարօրինակ պատմություն, թե ինչպես են «1998 թ. Անկարայում արտգործնախարարության գաղտնի փաստաթղթերը հայտնաբերվել թափոններ վաճառողի մոտ: Նախարարությունը նրան վաճառել էր 15 երկաթյա չիրկիզվող պահարաններ: Հետո պարզվել է, որ նախարարությունն այդ պահարանները վաճառել էր շենքի ներսում ազատ տարածքների բացակայության պատճառով, նույնիսկ առանց նայելու, թե ինչ կար դրանց մեջ»:

Բալին իր գրքում բերում է նաեւ կարեւոր փաստաթղթերի ոչնչացման այլ օրինակներ.

– «Թուրքիայի պատմության ինստիտուտի փաստաթղթերից շատերը, ներառյալ Աթաթուրքի մի նամակ, ոչնչացվել են».

– «1961 թ. Սահմանադրությամբ ստեղծված Սենատի նիստերի բոլոր արձանագրությունները, որ ակտիվ էր մնացել մինչեւ 1980 թ. սեպտեմբերի 12-ի պետական հեղաշրջումը, ուղարկվել էին Ցեյուլոգի եւ թղթի գործարաններ (SEKA)».

– «Երբ Կրոնական հարցերի (Դիյանեթ) պետական ֆինանսավորմամբ նախագահությունը 1965 թ. տեղափոխվեց մի նոր շենք, նրա ղեկավարությունն ասաց, որ «հին փաստաթղթերը չեն տեղավորվում նոր շենքի մեջ» եւ արխիվի փաստաթղթերից մի մասը ուղարկեց SEKA».

– «Երբ 1980-ական թվականներին SEKA-ում թղթի պակաս առաջացավ, պետական կառույցներին կոչ արվեց իրենց հին թղթերն ուղարկել գործարան: Այսպիսով, շատ արխիվներ ինստիտուցիոնալ մակարդակով ոչնչացվեցին»:

– 2013 թ. Թուրքիայի ազգային գրադարանի հունարեն, եբրայերեն եւ ասորերեն լեզուներով հին գրքերը տոննաներով վաճառվեցին, պատճառաբանելով «որ չկային գրադարանավարներ, որոնք կարող էին կարդալ այդ լեզուները»:

Որպես հետաքննող լրագրող Ուզայ Բուլուջը եզրակացրել է. «թուրքական հասարակությունից թաքուն պահված այսքան շատ տեղեկատվության միջոցով, թուրքական քարոզչությունը ստեղծել է այնպիսի զանգվածներ, որոնք կուրորեն հետեւում են ցանկացած պետական իշխանության, որոնք կորցրել են բարոյական կողմնացույցը եւ երբեք չեն առարկել կամ արտահայտվել, նույնիսկ երբ ականատես են եղել մարդու իրավունքների կոպիտ խախտումներ, որոնք չեն հարգում հայացքների տարբերությունը կամ այլակարծության իրավունքը, եւ պետք է ասել՝ որոնք առաջ են շարժվում պատմության ծայրահեղ սխալ տարբերակով»:

Հաջորդ անգամ, երբ թուրքական կառավարության քարոզիչները գրեն, որ «մեր արխիվները բաց են», դուք կարող եք նրանց ուղարկել այս հոդվածի պատճենը. այնտեղ գտնվող նշանավոր թուրք լրագրող Ուզայ Բուլուջի բացահայտումները կփակեն նրանց բերանները:

Քիրքուքում ապրում է 30 հազ ընտանիք, նրանց որեւէ վտանգ չի սպառնում. տեր Արթուն քահանա Խալաթյան



Իրաքի Քիրքուք քաղաքում ապրող հայերին այս պահին որեւէ վտանգ չի սպառնում: Այս մասին այսօր՝ հոկտեմբերի 14-ին, NEWS.am-ի հետ գրույցում ասաց Էրբիլի հոգեւոր հովիվ տեր Արթուն քահանա Խալաթյանը: Նա նշեց, որ Քիրքուք քաղաքն այս պահին շրջապատված է իրաքյան զորքերով, սակայն, իրավիճակը հանգիստ է, քաղաքը գրավելու գործողությունների մասին լուրերը չեն համապատասխանում իրականությանը:

Նրա խոսքով, Քիրքուքում ապրում է 30 հազ ընտանիք, այս պահին նրանք բոլորը քաղաքում են, այնտեղ կա նաեւ հայ առաքելական եկեղեցի՝ Սուրբ աստվածամայր:

Ավելի վաղ լրատվամիջոցները հայտնել էին, որ Իրաքի զորքերը Քիրքուքի գրավման գործողություն են սկսել: Ընդ որում, քրդական Rudaw հեռուստաընկերությունը հաղորդում է, որ Իրաքի միացյալ հրամանատարությունը հերքել է Քիրքուքի հարավում գործողություն սկսելու լուրերը, նշելով, որ Հավիջ քաղաքի ազատագրման համար իրականացվող օպերացիայի

շրջանակներում գործողություններ են իրականացվում տարածաշրջանը ԻՊ զինյալներից
ազատագրելու ուղղությամբ:

Սակայն փեշմարգայի հրամանատարությունը հայտարարել է, որ անցած գիշեր Իրաքի զինյալները եւ ռազմական կազմավորումները Քիրքուքի հարավից սկսել են առաջ շարժվել հարձակման նպատակով: Քիրքուք են ուղարկվել փեշմարգայի հազարավոր զինյալներ:

Հասարակական

Ի՞նչ ապագա ունի Իրաքի Քուրդիստանը եւ ի՞նչ կա գերտերությունների մտքին. հարցազրույց թուրքագետի հետ



Թուրքիայում ավելի քան համոզված են, որ Իրաքի Քուրդիստանի ստեղծումն իսրայելական նախագիծ է, որի նպատակը մի կողմից Միջերկրականի ափին իրեն լոյս պետություն ունենալն է, մյուս կողմից՝ Թուրքիայի պաշտակտումը: Այս մասին NEWS.am-ի հետ հարցազրույցում նշել է թուրքագետ Անդրանիկ Բալիդյանը:

Իրաքի Քուրդիստանն անկախության հանրաքվե անցկացրեց, որին մեծամասնությունը կողմ քվեարկեց: Դուք հնարավոր համարո՞ւմ եք Քուրդիստան պետության առաջացումն այժմյան աշխարհաքաղաքական իրավիճակում: Ինչո՞ւ Էրբիլի իշխանությունները որոշեցին հենց հիմա հանրաքվե անցկացնել:

Տեղի ունեցող այս իրադարձությունների արմատներն ավելի խորն են. Ամերիկայի ներխուժումից հետո ստեղծվեց Քուրդիստանի ինքնավար հատվածը, եւ արդեն այդ ժամանակ գծագրվեցին ապագա Քուրդիստանի սահմանները: Ներկայումս այդ մեծ ծրագրի մի մասն է տեղի ունենում: Ինչո՞ւ հիմա Էրբիլի իշխանությունները գնացին այդ քայլին: Դրա համար կային մի քանի պատճառներ. նախ տարածաշրջանում բավականին անկայուն վիճակ է, Միրիայում տեսնում ենք իշխանությունների թուլացում, ռազմական գործողությունների անընդհատ շարունակում, Իրաքում քաղաքական իշխանությունները բավական ծանր դրության մեջ են: «Իսլամական պետությունը» կարողացել է մասնատել, բզկտել Իրաքը, եւ Քուրդիստանի իշխանությունների համար բավական հարմար ժամանակ էր անկախության հանրաքվե իրականացնելու համար: Այսինքն՝ եկավ մի պահ, երբ դրա համար ստեղծվեցին նախադրյալներ:

Ինչպե՞ս կփոխվի տարածաշրջանում ուժերի դասավորվածությունը հանրաքվեից հետո:

Ինչպես տեսնում ենք այս գործընթացին կան լրջորեն հակազդող երկրներ, որոնց որեւէ կերպ ձեռնադու չէ Իրաքի Քուրդիստանի անկախությունը: Խոսքը Իրաքի, Իրանի եւ

Թուրքիայի մասին է, որոնցից ձեւավորվեց այսպես կոչված «դաշինքը»:

Որքանով է իրատեսական, որ Թուրքիան կարող է իրականացնել Քուրդիստան ռազմական ներխուժման մասին սպառնալիքները:

Թուրքական իշխանությունները բավական շատ սպառնալիքներ հնչեցրեցին ռազմական ներխուժման մասին, սակայն թե՛ Թուրքիայի վարչապետը, թե՛ նախագահն իրենց խոսքում նաեւ հայտարարեցին, որ Թուրքիան չի պատրաստվում պատերազմի, այլ հավանական վտանգի դեպքում երկրի անվտանգությունն ապահովելու համար ստիպված կլինի գործողություն իրականացնել: Այսինքն՝ ուղիղ պատերազմի հավանականությունն այս պահին չկա:

Իսկ Բաղդադը կգնա՞ ռազմական առճակատման:

Ինչպես նշեցի՝ իրաքյան իշխանություններն այնքան էլ լավ վիճակում չեն, որ դիմեն ռազմական գործողությունների: Մանավանդ վերջին տարիներին Իրաքն «Իսլամական պետության» դեմ պայքարում բավական կորուստներ է ունեցել, իսկ Մոսուլի ազատագրման ժամանակ հաջողվեց արդյունքի հասնել կռավիցիոն գործընկերների ավիահարվածների եւ նույն քրդական փեշմերգայի օգնությամբ: Այսինքն՝ մտածել, որ Բաղդադը կկարողանա ռազմական ճանապարհով լուծել խնդիրը, մի փոքր իրատեսական չէ:

Հնարավոր համարո՞ւմ եք Իրանի մասնակցությունը Քուրդիստանում ռազմական գործողություններին, թե՛ Թեհրանը կնախընտրի սահմանափակվել պատժամիջոցներով, ինչպիսին է, օրինակ՝ դեպի Էրբիլ թռիչքների դադարեցումը:

Իհարկե Իրանին խիստ անհանգստացնող է Քուրդիստանի անկախության հանրաքվեն, որովհետեւ հենց անմիջապես սահմանին Իրանի տարածքում գտնվում է Քուրդիստան նահանգը: Քուրդիստանի հանրաքվեն մեծ ոգեւորություն է առաջ բերել այդտեղի բնակչության մեջ, եւ Իրանն ուղղակի անտարբեր չի կարող մնալ այդ զարգացումներին: Իրանը, իհարկե, հայտարարեց պատժամիջոցների մասին՝ առաջին հերթին նշելով, որ Բաղդադի խնդրանքով դադարեցնում է ավիաթռիչքները, եւ հետագայում գուցե այլ պատժամիջոցներ կիրառի, սակայն ուղղակի ներխուժում իրաքյան Քուրդիստան կամ պատերազմ չի նախատեսի: Մյուս կողմից գիտենք, որ Իրաքի եւ Սիրիայի տարածքում գործում են շիական իրանամետ ռազմական ուժեր, որոնք Բաղդադի կողմից կազմակերպվելիք որոշակի ռազմական գործողությունների ժամանակ գուցե միանան:

Ի՞նչ պայմաններում Էրբիլը «կմտափոխվի» եւ կիրառարկի անկախությունից:

